ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտաժողովն անցկացվում է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 25RG-6B114 ծածկագրով «Կարս-Շիրակ տարածաշրջանի բանահյուսական ժառանգությունը» նախագծի շրջանակներում

ՇԻՐԱԿԸ՝ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

(Նվիրվում է բանագետ Մարինե Խեմչյանի հիշատակին)

Միջազգային գիտաժողով
6-7-ը նոյեմբերի 2026թ., Գյումրի

ՋԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

SHIRAK CENTER FOR ARMENIAN STUDIES

The conference is held within the framework of the project "Folklore Heritage of the Kars–Shirak Region" (code 25RG-6B114), funded by the Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia

SHIRAK AS A CENTER OF FOLKLORE AND ETHNOGRAPHIC TRADITIONS IN NORTHERN ARMENIA

(Dedicated to the Memory of Folklorist Marine Khemchyan)

International Conference

November 6–7, 2026 | Gyumri, Armenia

CONFERENCE

ABSTRACTS

Բովանդակություն

1. Երկու խոսք 7

2. **Էսթեր ԽԵՄՉՅԱՆ**
Իրապատում զրույցները Կարս-Շիրակյան տարածաշրջանի բանավոր ավանդույթում *11*

3. **Լուսինե ՂՈՒԿՋՅԱՆ, Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ**
Ավանդական բանահյուսության ժամանակակից դրսևորումները Շիրակի տարածաշրջանում (ըստ 2026 թվականի դաշտային նյութերի) *14*

4. **Արկադի ԱԿՈՊՈՎ**
«Տայք» միության գործունեությունը *18*

5. **Էոժենի ՍԱՔԸՉ**
Բուլղարիայի հայ համայնքը՝ որպես միջնորդ հայ-բուլղարական դիվանագիտական հարաբերությունների ձևավորման գործընթացում *20*

6. **Անտոանետա ԱՆԳԵԼՈՎԱ**
Կին կերպարները հայկական հեքիաթներում. դասակարգում և վերլուծություն *24*

7. **Լևոն ՄԿՐՏՉՅԱՆ**
Աշոցքի սարահարթի և Փամբակի գոգհովտի բրոնզ-երկաթեդարյան ամրոցների տարածական կազմակերպումը. համեմատական GIS վերլուծություն *28*

8. **Սուսաննա ԱԴԱՄՅԱՆ**
Պատմական Շիրակ գավառի վիմագրական ժառանգությունն ըստ Հրաչյա Աճառյանի «Հայարձանի» *30*

9. **Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
Արևմտահայ որբերին ոչնչացնելու թուրքական ռազմավարությունը Ալեքսանդրապոլի գավառի բռնազավթման շրջանում (1920–1921) *34*

10. **Սիրանուշ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**
Ավգուստ ֆոն Հաքստհաուզենը և հայ ժողովրդական բանահյուսությունը *37*

11. **Հասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Աստղիկ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ, Ռոման ՀՈՎՍԵՓՅԱՆ**
Հայերի հացաթխման մշակույթի շուրջ (ըստ Սյունիքում կատարված ազգագրական հետազոտությունների) *39*

12. **Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
Երգարանը որպես աղբյուրագիտական և հետազոտական նյութ *42*

13. **Դավենդեր ԿՈՒՄԱՐ**
Կանանց ժողովրդական երգերի գրառումներ Հարյանայի գյուղական բնակավայրերում *46*

14. **Սիդնի ՏԻՐԾՎԵԼ**
Բրեհոնյան իրավունքը և կարագ գողացող վհուկները վաղ նոր շրջանի Իռլանդիայում. իրավական ավանդույթներ, ժողովրդական հավատալիքներ և վհուկների հետապնդումը կանխելու միջոցներ *48*

15. **Թամար ԾՈՓՈՒՐԱՇՎԻԼԻ**
Հայ-վրացական փիլիսոփայական փոխառնչությունները XVIII դարի Վրաստանում. Անտոն Բագրատիոնիի դպրոցի օրինակը *50*

16. **Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ, Լուսինե ՆԱՀԱՏԱԿՅԱՆ**
Շիրակի ավանդական բնակելի տների ճարտարապետական ուսումնասիրություն *52*

17. **Վարդուհի ԲԱԼՈՅԱՆ**
Շիրակի ժողովրդական հեքիաթը և մանկական ընթերցանությունը. բանահյուսությունից՝ մանկական գրականություն *55*

18. **Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
Բանաձևային խոսքի էթնոմշակութային դրսևորումները. փորձ, հիշողություն և գոյատևում *57*

19. **Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ**
Երվանդունյաց Հայաստանի մ. թ. ա. III դարի պատմության մի անտեսված աղբյուր *59*

20. **Ինգա ԱՎԱԳՅԱՆ**
Բանտարկյալը բանտախցի կյանքի և գողական աշխարհի միջև (ըստ Կարապետ Դուրգարյանի հիշողությունների) *62*

21. **Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ, Փոլ ՔԱՈՒԴԵԼ, Արմանուշ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
Կերակրի խորհրդաբանությունը մանկական բանահյուսական տեքստերում (Կարսի և Շիրակի նյութերի հիման վրա) *66*

Contents

1. A few Words 9
2. **Ester KHEMCHYAN**
   Real-Life Narratives in the Oral Tradition of the Kars–Shirak Region *12*
3. **Lusine GHREJYAN, Hasmik MATIKYAN**
   Contemporary Manifestations of Traditional Folklore in the Shirak Region (Based on 2026 Fieldwork Materials) *16*
4. **Arkadi AKOPOV**
   The Activities of the "Tayk" Union *19*
5. **Eugenie SAKIZ**
   The Armenian Community of Bulgaria and Its Role as an Intermediary in the Formation of Armenian–Bulgarian Diplomatic Relations *22*
6. **Antoaneta ANGUELOVA**
   Female Characters in Armenian Fairy Tales: Classification and Analysis *26*
7. **Levon MKRTCHYAN**
   The Spatial Organization of Bronze and Iron Age Fortresses on the Ashotsk Plateau and the Pambak Depression: A Comparative GIS Analysis *29*
8. **Susanna ADAMYAN**
   The Epigraphic Heritage of the Historical Province of Shirak According to Hrachya Acharian's "Hayardzan" *32*
9. **Karine ALEKSANYAN**
   The Turkish Strategy for the Extermination of Western Armenian Orphans During the Occupation of Alexandropol District (1920–1921) *36*
10. **Siranush PARSADANYAN**
    August von Haxthausen and Armenian Folk Tradition *38*
11. **Hasmik ABRAHAMYAN, Astghik LALABEKYAN, Roman HOVSEPYAN**
    On the Bread-Making Culture of Armenians (Based on Ethnographic Research Conducted in Syunik) *41*
12. **Hasmik HARUTYUNYAN**
    The Songbook as a Source for Research and Source Studies *44*
13. **Devender KUMAR**
    Documenting Women's Folk Songs: Observations from Fieldwork in Rural Haryana *47*

14. **Sydney TIRSCHWELL**
Brehon Law and Butter-Stealing Witches in Early Modern Ireland: Legal Traditions, Folk Beliefs, and Safeguards against Witch-Hunting.....*49*

15. **Tamar TSOPURASHVILI**
Armenian–Georgian Philosophical Interrelations in 18th-Century Georgia: The Case of Anton Bagrationi's School.....*51*

16. **Davit NAHATAKYAN, Lusine NAHATAKYAN**
An Architectural Study of Traditional Residential Houses in Shirak.....*53*

17. **Varduhi BALOYAN**
The Folk Tale of Shirak and Children's Reading: From Folklore to Children's Literature *56*

18. **Karine SAHAKYAN, Roza HOVHANNISYAN**
Ethnocultural Manifestations of Formulaic Speech: Experience, Memory, and Survival.....*58*

19. **Sargis PETROSYAN, Lusine PETROSYAN**
An Overlooked Source on the History of Yervanduni Armenia in the 3rd Century BCE.....*61*

20. **Inga AVAGYAN**
The Prisoner Between Prison Cell Life and the Criminal Underworld: Based on the Memoirs of Karapet Durgaryan *64*

21. **Hasmik MATIKYAN, Paul COWDELL, Armanush VARDANYAN**
The Symbolism of Food in Children's Folklore Texts (Based on Comparative Materials from Kars and Shirak) *67*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը ավանդաբար կազմակերպում է հանրապետական և միջազգային գիտաժողովներ՝ նպաստելով Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրմանն ու հանրահռչակմանը:

Այս միջազգային գիտաժողովը ևս, որը կրում է «Շիրակը՝ Հյուսիսային Հայաստանի բանահյուսական և ազգագրական դրսևորումների կենտրոն» խորագիրը, համախմբում է հայաստանյան և օտարերկրյա հետազոտողների՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Բուլղարիայից, Հնդկաստանից և Վրաստանից՝ ստեղծելով գիտական փորձի փոխանակման, մասնագիտական երկխոսության և համագործակցության նոր հնարավորություններ:

Գիտաժողովն անցկացվում է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 25RG-6B114 ծածկագրով «Կարս-Շիրակ տարածաշրջանի բանահյուսական ժառանգությունը» նախագծի շրջանակներում (ղեկավար՝ բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Մատիկյան):

Այս գիտաժողովն առանձնահատուկ խորհուրդ ունի մեզ համար. այն նվիրվում է նախագծի խմբի անդամ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Մարինե Խեմչյանի հիշատակին: Կյանքից վաղաժամ հեռանալով՝ Մարինե Խեմչյանը մեզ թողեց իր գիտական աշխատանքի պտուղները: Նախագծի շրջանակներում իրականացրած նրա ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Շիրակի վիպական բանահյուսությունը՝ իր հարուստ սյուժեներով, տեղական ու միջազգային տարբերակներով:

Բանագետ Մարինե Խեմչյանի գիտական ղեկավարությամբ 2024 թվականին հրատարակվել է «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ծավալուն ժողովածուն (համակազմողներ՝ Է. Խեմչյան, Լ.Ղռեջյան, Հ. Մատիկյան):

Ժողովածուի հրատարակումը կարևոր ներդրում է Շիրակի բանահ-

յուսական ժառանգության համակարգման, գիտական շրջանառության մեջ դնելու և հետագա ուսումնասիրությունների համար սկզբնաղբյուրային հիմք ապահովելու գործում:

Այս գիտաժողովը ոչ միայն գիտական հանդիպում է, այլև հարգանքի ու երախտագիտության արտահայտությունը բանագետ Մարինե Խեմչյանի հիշատակին…

Համլիկ Մատիկյան, բ.գ.թ. դոցենտ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

A FEW WORDS

The Shirak Center for Armenological Studies has traditionally organized national and international conferences, becoming a platform that brings together researchers and academic institutions from diverse research centers and contributes to the study and promotion of Shirak's historical and cultural heritage.

The present international conference, entitled "Shirak as a Center of Folklore and Ethnographic Traditions in Northern Armenia," likewise brings together researchers from Armenia and abroad, including the United States, the United Kingdom, Bulgaria, India, and Georgia, creating new opportunities for the exchange of scholarly expertise, professional dialogue, and academic collaboration.

The conference is held within the framework of the project "Folklore Heritage of the Kars–Shirak Region" (code 25RG-6B114), funded by the Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia.

This conference holds special significance for us, as it is dedicated to the memory of Marine Khemchyan (PhD in Philology) , a member of the project team and Senior Researcher at the Institute of Archaeology and Ethnography, who specialized in folklore studies.

Although her life was cut short, Marine Khemchyan left behind the fruits of her scholarly work. Among the subjects she explored within the framework of the project, a particularly prominent place was occupied by the epic folklore of Shirak, with its rich narrative plots and diverse local and international variants.

Another significant contribution to her scholarly legacy is the extensive collection "Shirak: The Folklore Culture of Armenians", published in 2024,

which she leaded and co-compiled together with E. Khemchyan, L. Ghrejyan, and H. Matikyan. The publication of this volume represents an important contribution to the systematization of Shirak's folklore heritage, its introduction into scholarly circulation, and the establishment of a source base for future research.

This conference is not merely a scholarly gathering; it is also an expression of our respect, gratitude, and enduring appreciation for the memory of folklorist Marine Khemchyan and her contribution to the study of Armenian folklore.

Hasmik Matikyan
PhD in Philology, Associate Professor
Shirak Center for Armenological Studie

Էսթեր ԽԵՄՉՅԱՆ, *բ.գ.թ. (Հայաստան)*
ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԻՐԱՊԱՏՈՒՄ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ ԿԱՐՍ-ՇԻՐԱԿՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ[1]

Սույն ուսումնասիրությունը նվիրված է Կարս-շիրակյան տարածաշրջանի բանահյուսական ժանրերից մեկին, որը բանագետներն անվանում են իրապատում զրույց: Իրապատում զրույցն անմիջականորեն կապված է տվյալ հասարակության առօրյա կյանքին, որը հիմնված է սովորութա-հավատալիքային հզոր և դարերով ամրակայված հիմքի վրա և որպես հերոս ունի հասարակության կողմից ճանաչելի, խոսքաշեն, ինքնատիպ, երբեմն էլ արտառոց վարքուբարքով անհատի: Այդ անհատներն իրենց տեսակի մեջ հեղինակություն են (դրական կամ բացասական) տվյալ տարածքի, գյուղի, քաղաքի, գավառի հասարակության մեջ: Իրապատում զրույց-պատումները հավանականի ու անհավանականի սահմանագծում են գտնվում և կախված պատումի բնույթից, հերոսի անհատականությունից, իրական դեպքերը ներկայացնելու կերպից, պատմողի հետապնդած նպատակից և ունկնդիրների վրա ներազդելու ու տպավորություն ստեղծելու ցանկությունից՝ դրսևորվում են զավեշտական, սարսափազդու կամ բարոյա-խրատական նշանակությամբ և գործնական ազդեցությամբ:

Ուսումնասիրությունը կատարվել է «Կարս. հայոց բանահյուսական մշակույթը» և «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթ» ժողովածուներում ընդգրկված իրապատում զրույցների հիման վրա: Ժամանակագրորեն ժողովածուներում ընդգրկված զրույցները ստեղծվել են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Դրանք համառոտ արձակ-պատմողական ստեղծագործություններ են, որոնց առաջին պատմողները կատարված դեպքերի անմիջական մասնակիցներն ու ականատեսներն են եղել: Իրապատում զրույցների հերոսները Կարսի և Շիրակի հասարակության տարբեր շերտերը ներկայացնող համընդհանուր ճանաչում ունեցող իրական անհատներ են, ինչպես օրինակ Փալտրվանցի Բուդաղը, Կարո աղան, Խոլոռը, Բոնդեն, քաղաքագլուխ Կամսարականը, Չրախլեցի Փայլանը և ուրիշներ: Իրապատում զրույցների առանձնահատկությու-

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 25RG-6B114 ծածկագրով նախագծի շրջանակում:

ներն են. ա) վկայակոչել բոլորին ծանոթ որևէ անհատի և բ) անպայման շեշտել բնակավայրը որտեղ ծավալվում են գործողությունները: Այս երկու գործոնները հավաստիություն են հաղորդում պատումներին և ընդգծում են իրական լինելու հանգամանքը:

Բանահավաքչական աշխատանքների արդյունքները ցույց են տալիս, որ տեղական իրապատում զրույցներն ակտիվորեն շրջանառվել և փոփոխության են ենթարկվել: Ըստ բանասաց Ավետիք Տոնոյանի հավաստման, իր ներկայացրած պատումը լսել է մի աշտարակցուց, որն իր հերթին այն լսել է մի եղվարդցուց, որը հավաստիացրել է, որ այն լսել է մի քանաքեռցուց, որի հետ է պատահել պատմվող իրական դեպքը: Փոխանցումների ընթացքում պատումը զարգացել է, ձեռք է բերել առասպելական վիպական մոտիվներ ու գծեր, սովորութա-հավատալիքային տարրեր և դարձել է տիպիկ ժողովրդական զրույց: Վերոհիշյալ տեղեկատվությունը հավաստում է այն ժողովրդական ստեղծագործական ճանապարհը, որով անցնում են իրապատում զրույցները:

Իրապատում զրույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ներկայացնում է Կարս-շիրակյան տարածաշրջանի գոյնեղ միջավայրը, կենցաղը, մարդկային փոխհարաբերությունները, սովորությունները, որոնք բնորոշ են եղել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի Կարս-շիրակյան հասարակությանը: Ուսումնասիրված իրապատում զրույցները Կարս-շիրակյան բանահյուսական ժառանգության անքակտելի մասն են և բանավոր ճանապարհով փոխանցվել են մինչև 20-րդ դարի 60-ական թվականները:

Ester KHEMCHYAN: PhD in Philology,
Institute of Archaeology and Ethnography of NAS RA

REAL-LIFE NARRATIVES IN THE ORAL TRADITION OF THE KARS–SHIRAK REGION[2]

This study examines one of the folklore genres of the Kars–Shirak region, known in folkloristics as the *real-life narrative*. This genre is closely connected with the everyday life of a given community, which is grounded in a deeply rooted system of customs and beliefs consolidated over centuries. Its

[2] The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25RG-6B114)

central figure is an individual recognized by the community for their eloquence, distinctive character, or sometimes extraordinary behaviour. Such individuals enjoy a certain degree of authority, whether positive or negative, within the society of a particular area, village, town, or district. Real-life narratives occupy the boundary between the plausible and the implausible. Depending on the nature of the narrative, the protagonist's personality, the manner in which actual events are recounted, the narrator's purpose, and the desire to influence listeners and make a lasting impression, these narratives may serve humorous, terrifying, or moral-didactic functions and exert a practical influence on their audience.

The study is based on real-life narratives included in the collections *Kars: Armenian Folklore Culture* and *Shirak: Armenian Folklore Culture*. Chronologically, the narratives in these collections originated in the late nineteenth and early twentieth centuries. They are brief prose narratives whose original tellers were direct participants in or eyewitnesses to the events described. The protagonists are real individuals widely known among different social strata of Kars and Shirak, including Budagh of Paltrevants, Karo Agha, Kholor, Bonden, the city mayor Kamsarakan, Paylevan of Chrakhlik, and others.

Two characteristic features of these narratives are: (a) reference to an individual familiar to the community and (b) explicit identification of the settlement in which the events unfold.

These two factors lend credibility to the narratives and underscore their claim to authenticity.

The results of folklore fieldwork indicate that local real-life narratives circulated widely and underwent continual transformation. According to the testimony of informant Avetik Tonoyan, the narrative he recounted had been heard from a man from Ashtarak, who, in turn, had heard it from someone from Yeghvard. The latter had claimed to have heard it from a man from Kanaker, who had supposedly been involved in the actual event being narrated. As the story passed from one person to another, it developed, acquired legendary and epic motifs and features, incorporated elements of customary beliefs, and evolved into a typical folk narrative. This account

illustrates the process of folk creativity through which real-life narratives are transmitted and transformed.

The study of these narratives reveals the distinctive character of the Kars–Shirak region, its everyday life, interpersonal relationships, and customs characteristic of Kars–Shirak society in the late nineteenth and early twentieth centuries. The real-life narratives examined constitute an integral part of the region's folkloric heritage. Studied narratives have been transmitted from mouth to mouth up the 60-s of the XX th century.

Լուսինե ՂՌԵՋՅԱՆ բ.գ.թ., դոցենտ (Հայաստան)
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Համիկ ՄԱՏԻԿՅԱՆ բ.գ.թ., դոցենտ(Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ (ԸՍՏ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ)[3]

Շիրակի պատմաաշխարհագրական տարածաշրջանը հայոց հոգևոր մշակույթի և բանավոր ավանդույթների ամենահարուստ օջախներից է, որտեղ դարերի ընթացքում ձևավորվել և զարգացել են բանավոր ստեղծագործության ինքնատիպ ձևեր: Ժամանակակից գլոբալացման և տեղեկատվական հեղափոխության պայմաններում ավանդական բանահյուսությունը ենթարկվում է որակական փոխակերպումների՝ մի կողմից պահպանելով հնագույն կառուցվածքային տարրերը, մյուս կողմից՝ ադապտացվելով նոր սոցիալ-մշակութային միջավայրին:

2026 թվականին Շիրակի մարզի Ղազանչի, Քեթի, Պեմզաշեն, Տուֆաշեն, Հայկասար, Հայրենյաց գյուղերում իրականացված դաշտային ազգագրական և բանագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ բանավոր ավանդույթը ոչ միայն չի կորցրել իր կենսունակությունը, այլև դրսևորվում է նոր՝ ժամանակակից կենցաղին ընորոշ ու բազ-

[3] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 25RG-6B114 ծածկագրով նախագծի շրջանակում:

մաշերտ դրսևորումներով:

2026 թվականի դաշտային հետազոտությունների ընթացքում բախվել ենք մի շարք մեթոդաբանական և հոգեբանական առանձնահատկությունների, որոնք էական ազդեցություն ունեն ժամանակակից բանահյուսության հավաքման գործընթացի վրա: Հետազոտվող միջավայրում դեռևս խորապես արմատավորված է այն կարծրատիպը, թե բանահյուսությունը բացառապես հնագույն, «հեռավոր» անցյալին պատկանող, գրի առնված կամ արդեն ավանդականացված սյուժեներն ու առասպելներն են: Զրույցների ընթացքում բանասացները հաճախ թերագնահատել են սեփական փորձառությունը՝ պատճառաբանելով, թե իրենք «խորհրդային ժամանակաշրջանի մարդիկ են», որոնց առօրյա կյանքն անցել է «առավոտյան աշխատանքի և երեկոյան տուն վերադառնալու» արտադրական ու սոցիալական խիստ ռեժիմում, հետևաբար «չունեն և չեն կարող իմանալ» ավանդական նյութեր: Այս մոտեցումը հանգեցնում է ինքնաբերաբար ստեղծվող մի տեսակ «հոգեբանական գրաքննության», երբ անհատը բանահյուսական իրականության կրող լինելով հանդերձ՝ այն չի գիտակցում որպես արժեք կամ ուսումնասիրության առարկա: Այս արգելքները հաղթահարելու համար վճռորոշ նշանակություն է ձեռք բերում բանահավաքի մասնագիտական գիտելիքների և մեթոդական ճկունության կիրառումը: Ուղղակի հարցադրումների փոխարեն կիրառված անմիջական, ազատ զրույցի տակտիկան («խոսքի բռնվելը») հնարավորություն է տվել շրջանցելու կարծրատիպային պատկերացումները: Հաղորդակցման բնականոն հոսքում բանասացներն սկսել են հիշել, պատմել ու արտաբերել առօրյա խոսակցական լեզվին բնորոշ բանաձևեր, հավատալիքային դրսևորումներ, կենցաղային պատմություններ և բանավոր հիշողության այլ արժեքավոր շերտեր՝ առանց անգամ գիտակցելու, որ այդ պահին հենց իրենք են հանդես գալիս որպես ավանդական բանահյուսության կրող-փոխանցողներ:

2026 թվականի դաշտային նյութերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Շիրակի տարածաշրջանում ավանդական բանահյուսությունը գտնվում է շարունակական փոխակերպման փուլում: Այն հաջողությամբ դիմակայում է արդիականացման մարտահրավերներին՝ շնորհիվ իր ճկունության և հանրային հիշողության մեջ

ամրագրված լինելու հանգամանքի: Ժամանակակից բանագիտական դաշտում այս նյութերի գրանցումն ու համակարգումը կարևոր նշանակություն ունեն հայոց ավանդական մշակույթի զարգացման, տեղական առանձնահատկությունների և բանավոր ավանդույթների արդի վիճակի բազմակողմանի գնահատման համար:

Lusine GHREJYAN, PhD in Philology, Associate Professor (Armenia)
Institute of Archaeology and Ethnography
Hasmik MATIKYAN, PhD in Philology, Associate Professor (Armenia)
Shirak Center for Armenological Studies

CONTEMPORARY MANIFESTATIONS OF TRADITIONAL FOLKLORE IN THE SHIRAK REGION (BASED ON 2026 FIELDWORK DATA)[4]

The historical and geographical region of Shirak is one of the richest centres of Armenian spiritual culture and oral traditions as distinctive forms of oral creativity have emerged and evolved over the centuries. Under the conditions of contemporary globalisation and the information revolution, traditional folklore is undergoing qualitative transformations: while preserving ancient structural elements, it is also adapting to the new sociocultural environment.

Fieldwork conducted in 2026 in the villages of Ghazanchi, Keti, Pemzashen, Tufashen, Haykasar, and Hayrenyats in Shirak Region demonstrates that oral tradition has not lost its vitality. Rather, it continues to manifest itself in new and multifaceted forms characteristic of contemporary everyday life.

During the 2026 fieldwork, we encountered several methodological and psychological factors that significantly influenced the process of collecting contemporary folklore. The communities under study continue to be strongly

[4] The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25RG-6B114)

influenced by the stereotype that folklore consists exclusively of ancient materials belonging to a distant past, including recorded or already traditionalised narratives and myths. During interviews, informants often tended to underestimate their own experiences, explaining that they belonged to the Soviet-era generation, whose everyday lives had been governed by a rigid work and social routine of "going to work in the morning and returning home in the evening." Consequently, they maintained that they "had no traditional materials to share and could not possibly know any."

This perception gives rise to a form of self-imposed *psychological censorship*, whereby individuals, despite being bearers of folkloric traditions, fail to recognise their own experiences and knowledge as culturally valuable or worthy of scholarly investigation. Overcoming these barriers requires the effective application of the fieldworker's professional knowledge and methodological flexibility. Rather than relying on direct questioning, the use of informal, open-ended conversation—a technique of naturally initiating and sustaining dialogue—made it possible to move beyond stereotypical perceptions.

As the conversations unfolded naturally, informants began recalling and recounting experiences, articulating formulaic expressions characteristic of everyday speech, manifestations of folk beliefs, accounts of everyday life, and other valuable layers of oral memory. In many cases, they did so without even realising that they themselves were acting as bearers and transmitters of traditional folklore.

A comparative analysis of the 2026 fieldwork materials leads to the conclusion that traditional folklore in the Shirak region is undergoing a process of continuous transformation. It continues to withstand the challenges of modernisation, owing to its inherent adaptability and its rootedness in collective memory. In contemporary folkloristic research, the documentation and systematisation of these materials are of considerable importance for understanding the development of Armenian traditional culture, identifying local cultural specificities, and comprehensively assessing the current state of oral traditions.

Արկադի ԱԿՈՊՈՎ, պ.գ.թ. (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

«ՏԱՅՔ» ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ձևավորվեց «Տայք» հասարակական-հայրենակցական միությունը, որի հիմնական նպատակն էր Տայքից, հատկապես Խոտորջուրից գաղթած և տեղահանված հայության համախմբումը, պատերազմից տուժած հայրենակիցներին օգնության կազմակերպումը և հայրենի բնակավայրերի վերականգնմանն աջակցելը: Միության գործունեության կարևոր կենտրոններից էր Ալեքսանդրապոլը, իսկ կազմակերպությունն իր մասնաճյուղերն ուներ նաև այլ բնակավայրերում, այդ թվում՝ Բաթումում: Միության առաջին ղեկավար կազմում ընդգրկված էին Հովհաննես Ռեհանյանը՝ որպես նախագահ, Ագապիոս Զաքարյանը, Կարապետ Մաշուրյանը, Զաքար Մանամշյանը, Հակոբ Չավուշյանը և Սերովբե Գևորգյանը: Կենտրոնական վարչությունից բացի գործում էին վերաքննիչ հանձնախումբ, գործադիր մարմին, վնասների հատուցման և վիճակագրության հանձնախումբ, երիտասարդական ու թաղային միություններ:

«Տայք» միության գործունեությունն առավել ակտիվացավ 1916 թ. ռուսական զորքերի կողմից Խոտորջուրի շրջանի գրավումից հետո: Միությունը կազմակերպեց երիտասարդական խմբերի մեկնումը հայրենի շրջաններ՝ բնակավայրերի պաշտպանության, տնտեսության վերականգնման, հողագործական աշխատանքների և պարենային պաշարների ստեղծման նպատակով: Միաժամանակ իրականացվում էին դրամահավաքներ, նյութական միջոցների հավաքագրում և գաղթականների աջակցություն: Կազմակերպությունը ձգտում էր տարբեր քաղաքներում և շրջաններում բնակվող տայքեցիներին ընդգրկել միասնական հայրենակցական կառույցի մեջ և նրանց մարդկային ու նյութական ներուժը ծառայեցնել հայրենիքի վերաշինությանը:

1917–1920 թթ. քաղաքական և ռազմական զարգացումները սահմանափակեցին միության ծրագրերի ամբողջական իրականացումը, սակայն նրա գործունեությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: 1920-ականների կեսերին «Տայք հայրենակցական միությունը» մասնակցեց Խորհրդային Հայաստանում խոտորջուրցիների նոր բնակավայրի ստեղծման աշխատանքներին՝ նյութական աջակցություն ցուցաբերելով 1925 թ. Ախտայի շրջանում հիմնված Խոտորջուրի կոմունային: Այդ

շրջանում միության ղեկավարներից էր Ստեփան Ծաղիկյանը: 1927 թվականից խորհրդային իշխանությունների հետապնդումները հարված հասցրին կազմակերպության ակտիվ գործիչներին՝ փաստորեն սահմանափակելով միության հետագա գործունեությունը:

Arkadi AKOPOV, PhD in History (Armenia)
Shirak Center for Armenological Studies

ACTIVITIES OF THE "TAYK" UNION

During the First World War, the "Tayk" social and compatriotic union was established with the primary aim of uniting Armenians who had emigrated or been displaced from Tayk, particularly from Khotorjur, organizing assistance for compatriots affected by the war, and supporting the restoration of their native settlements. Alexandropol was one of the important centers of the Union's activities, while the organization also had branches in other locations, including Batumi. The Union's first leadership included Hovhannes Rehanyan as chairman, Agapios Zakaryan, Karapet Mashuryan, Zakar Manamshyan, Hakob Chavushyan, and Serovbe Gevorgyan. In addition to the Central Board, the Union had a supervisory committee, an executive body, a compensation and statistics committee, as well as youth and neighborhood associations.

The activities of the "Tayk" Union intensified after Russian troops occupied the Khotorjur region in 1916. The Union organized groups of young men to travel to their native region in order to defend the settlements, restore the local economy, carry out agricultural work, and establish food reserves. At the same time, fundraising campaigns were conducted, material resources were collected, and assistance was provided to refugees. The organization sought to bring together people from Tayk living in different cities and regions within a unified compatriotic structure and to mobilize their human and material resources for the reconstruction of their homeland. Political and military developments between 1917 and 1920 limited the full implementation of the Union's programs; nevertheless, its activities continued in subsequent years. In the mid-1920s, the "Tayk" Compatriotic Union participated in efforts to establish a new settlement for the people of Khotorjur in Soviet Armenia, providing material support to the Khotorjur

Commune founded in the Akhta district in 1925. During this period, Stepan Tsaghikyan was among the Union's leaders. From 1927 onward, persecution by the Soviet authorities targeted active members of the organization, effectively restricting the Union's further activities.

Էոժենի ՍԱՔԸՋ , բ.գ.թ. (Բուլղարիա)
Սոֆիայի «Սուրբ Կլիմենտ Օխրիդսկի» համալսարան

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆՈՐԴ ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և 1918 թ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո հայկական սփյուռքը կանգնեց քաղաքական, սոցիալական և կազմակերպչական նոր մարտահրավերների առջև: Հայոց ցեղասպանության հետևանքները, փախստականների հոսքերը և նորաստեղծ պետության միջազգային անորոշ դրությունը անհրաժեշտություն առաջացրին ձևավորելու ներկայացուցչական կառույցներ, որոնք կարող էին պաշտպանել հայկական համայնքների շահերը և աջակցել Հայաստանի անկախության միջազգային ճանաչման ձգտումներին:

Սույն հետազոտությունն անդրադառնում է Բուլղարիայի հայ համայնքի դերին Բուլղարիայի թագավորության և Հայաստանի Հանրապետության միջև առաջին պաշտոնական շփումների հաստատման գործում: Հետազոտության հիմնական նպատակն է վերականգնել «Պուլկարահայ ազգային միութիւն» կազմակերպության ստեղծման պատմությունը, սկզբնական գործունեությունն ու քաղաքական նախաձեռնությունները՝ բացահայտելով նրա ներդրումը երկկողմ հարաբերությունների ձևավորման գործընթացում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում համայնքային ինքնակազմակերպումից դեպի քաղաքական ներկայացուցչություն անցմանը, ինչպես նաև այն կազմակերպության պատմական նշանակությանը, որի գործունեությունը մինչ օրս բավարար չափով ուսումնասիրված չէ պատմագրության մեջ:

1918 թ. վերջին «Դաշնակցություն» կուսակցության նախաձեռնութ-

յամբ ստեղծված «Պուլկարահայ ազգային միութիւն»-ը ձևավորվեց հայ ազգային ինքնակազմակերպման ավելի լայն գործընթացի համատեքստում, որը սկիզբ էր առել Անդրկովկասում 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո և շարունակություն գտել սփյուռքահայ համայնքներում: Հայ ազգային խորհուրդների և միությունների օրինակով կազմակերպությունը ձգտում էր համախմբել քաղաքական և հասարակական տարբեր հոսանքները, պաշտպանել փախստականների շահերը և ներկայացնել հայ համայնքը բուլղարական իշխանությունների և Բուլղարիայում գտնվող Անտանտի տերությունների ներկայացուցիչների առջև: Այս նպատակները կապում էին սփյուռքի անմիջական կարիքները Հայաստանի Հանրապետության անկախության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերի հետ:

Հետազոտությունը հիմնված է պատմական և աղբյուրագիտական մոտեցումների վրա՝ զուգորդված սկզբնաղբյուրների քննադատական և համեմատական վերլուծությամբ: Հիմնական աղբյուրներն են «Հայաստան» թերթի հրապարակումները և Բուլղարիայի պետական արխիվներում պահպանվող չհրապարակված փաստաթղթերը: Առանձնահատուկ նշանակություն ունեն Մովսես Պետրոսյանի հոդվածները, որոնցում ներկայացվում են Միության ստեղծման հիմնավորումները, նպատակներն ու կազմակերպչական սկզբունքները: Դրանցում պարունակվող տեղեկությունները համադրվում են 1918 թ. դեկտեմբերի 15-ի հայ պատվիրակների ժողովի բանաձևի և նույն թվականի դեկտեմբերի 20-ին Բուլղարիայի վարչապետին ուղղված նամակի հետ: Այս փաստաթղթերը հնարավորություն են տալիս ճշգրտելու կազմակերպության ստեղծման ժամանակագրությունը և բացահայտելու նրա առաջին քաղաքական նախաձեռնությունները: Դրանք վկայում են Հայաստանի անկախության միջազգային ճանաչման, հայ ժողովրդի ազգային իրավունքների պաշտպանության և բուլղարական կառավարության աջակցություն ստանալու ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին: Միաժամանակ աղբյուրների համադրությունը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմելու Միության գործունեության սկզբնական փուլի մասին և քննադատաբար վերագնահատելու պատմագրության մեջ նրա ստեղծման ու դերի վերաբերյալ որոշ ձևավորված պատկերացումներ:

Վերլուծության արդյունքում «Պուլկարահայ ազգային միութիւն» կազմակերպությունը ներկայանում է որպես ակտիվ հասարական-

քաղաքական միջնորդ, որի նախաձեռնությունները դուրս էին գալիս ներհամայնքային գործունեության շրջանակներից: Բուլղարական իշխանությունների հետ կապերի և հայկական ազգային շահերի պաշտպանությանն ուղղված ջանքերի միջոցով Միությունը նպաստեց այն քաղաքական և ինստիտուցիոնալ նախադրյալների ձևավորմանը, որոնք հիմք հանդիսացան երկու կառավարությունների հետագա պաշտոնական շփումների համար՝ կապված Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման և Բուլղարիայում նրա ներկայացուցչության հաստատման հետ: Այսպիսով, Միության գործունեությունը բացահայտում է սփյուռքի նշանակությունը՝ որպես երկկողմ հարաբերությունների ձևավորման ակտիվ գործոն և հասարակական նախաձեռնությունների ու պաշտոնական դիվանագիտության միջև կապող օղակ:

Eugenie SAKIZ, PhD, Assistant Professor (Bulgaria)
Sofia University “St. Kliment Ohridski”

THE ARMENIAN COMMUNITY OF BULGARIA AND ITS ROLE AS AN INTERMEDIARY IN THE FORMATION OF ARMENIAN–BULGARIAN DIPLOMATIC RELATIONS

Following the First World War and the declaration of independence of the Republic of Armenia in 1918, the Armenian diaspora faced new political, social, and organizational challenges. The consequences of the Armenian Genocide, refugee movements, and the uncertain international position of the newly established state created a need for representative organizations capable of protecting Armenian communities and supporting international recognition of Armenia's independence.

This study examines the role of the Armenian community in Bulgaria in establishing the first official contacts between the Kingdom of Bulgaria and the Republic of Armenia. It aims to reconstruct the establishment, early activities, and political initiatives of the Armenian National Union in Bulgaria (Պուլկարահայ ազգային միութիւն), highlighting its contribution to bilateral relations. Particular attention is paid to the transition from community self-organization to political representation and to the historical significance of this insufficiently studied organization.

Established in late 1918 on the initiative of the Armenian Revolutionary

Federation (Dashnaktsutyun), the Union emerged within the broader process of Armenian national self-organization that began in Transcaucasia following the February Revolution of 1917 and extended to diaspora communities. Following the example of Armenian national councils and unions, it sought to unite different political and social groups, protect refugees' interests, and represent the Armenian community before Bulgarian authorities and representatives of the Entente powers in Bulgaria. These objectives linked the diaspora's immediate needs with efforts to secure international recognition of the Republic of Armenia's independence.

The study combines historical and source-critical approaches with comparative analysis of primary sources, including publications in the newspaper Hayastan (Հայաստան) and unpublished documents from Bulgarian state archives. Particularly important are articles by Movses Petrosyan outlining the Union's origins, objectives, and organizational principles. These are compared with the resolution of the Armenian delegates' assembly of 15 December 1918 and a letter to the Bulgarian Prime Minister dated 20 December 1918. The documents clarify the chronology of the Union's establishment and reveal early political initiatives aimed at securing international recognition of Armenia's independence, defending Armenian national rights, and obtaining Bulgarian government support. Comparing these sources also allows a reassessment of established historiographical interpretations of the Union's origins and role.

The analysis identifies the Armenian National Union in Bulgaria as an active socio-political intermediary whose initiatives extended beyond internal community affairs. Through contacts with Bulgarian authorities and efforts to defend Armenian national interests, the Union contributed to creating political and institutional conditions for subsequent official contacts between the two governments concerning recognition of the Republic of Armenia's independence and the establishment of its representation in Bulgaria. The Union's activities thus demonstrate the diaspora's significance in developing bilateral relations and connecting civic initiatives with official diplomacy.

Անտոանետա ԱՆԳԵԼՈՎԱ, բ.գ.թ., դոցենտ (Բուլղարիա)
Սոֆիայի «Սուրբ Կլիմենտ Օխրիդսկի» համալսարան

ԿԻՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական հեքիաթները հայ ժողովրդի մշակութային ժառանգության կարևոր մասն են՝ պահպանելով հնագույն դիցաբանական հավատալիքները, բարոյական արժեքները և կանացիության վերաբերյալ ավանդական պատկերացումները: Կանացի կերպարները հանդես են գալիս բազմազան դրսևորումներով՝ անմեղ աղջիկներից և իմաստուն կանանցից մինչև գերբնական հովանավորներ, մայրական կերպարներ և չարագործ հակառակորդներ: Նրանց խորհրդանշական նշանակությունն արտացոլում է ինչպես կրկնվող արքետիպային օրինաչափությունները, այնպես էլ հայկական ժողովրդական երևակայության առանձնահատկությունները:

Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել, դասակարգել և վերլուծել ընտրված հայկական հեքիաթների կանացի կերպարները՝ ըստ նրանց արքետիպային հատկանիշների, պատումային գործառույթների և մշակութային խորհրդանշական նշանակության: Հետազոտության հիմնական դրույթն այն է, որ այս կերպարները մարմնավորում են ոչ միայն համընդհանուր արքետիպային օրինաչափություններ, այլև հայկական դիցաբանության և բանահյուսության ազդեցությամբ ձևավորված մշակութային առանձնահատուկ պատկերացումներ: Հատուկ ուշադրություն է դարձվում կանացիության ինքնատիպ դրսևորումների բացահայտմանը, մասնավորապես՝ արևային խորհրդանշանների, գերբնական իմաստության և տիեզերական մայրության հետ կապված կերպարներին:

Հետազոտությունը համադրում է Կառլ Գուստավ Յունգի արքետիպերի տեսությունը և Վլադիմիր Պրոպի հեքիաթի ձևաբանական մոտեցումը: Յունգի տեսությունը հիմք է ծառայում կրկնվող խորհրդանշական պատկերների մեկնաբանության համար, մինչդեռ Պրոպի մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս բացահայտելու կանացի կերպարների պատումային հիմնական գործառույթները, մասնավորապես՝ պարգևատուի, օգնականի, որոնվող անձի և չարագործի դերերը: Ութ հայկական հեքիաթների համեմատական տեքստային վերլուծության միջոցով առանձնացվում են հինգ հիմնական վերլուծական խմբեր՝ Կույ-

սը, Իմաստուն կինը և Իմաստուն պառավը, Մեծ մայրը, Սարսափելի մայրը և Ստվերը: Այս խմբերը կիրառվում են որպես մեկնաբանական գործիքներ և չեն ներկայացվում իբրև Յունգի կողմից սահմանված անփոփոխ դասակարգում:

Կույսը հանդես է գալիս որպես առավել հաճախ հանդիպող կանացի կերպար՝ ընդգրկելով ինչպես վտանգի մեջ հայտնված հերոսուհիներին, այնպես էլ գիտելիքներով և գերբնական կարողություններով օժտված գործունյա հերոսուհիներին: Հետազոտության կարևոր արդյունքներից է Արևային կույսի առանձնացումը՝ որպես մշակութային ինքնատիպ ենթատեսակ, որը կապված է ոսկեգույն մազերի, լույսի, պտղաբերության և վերածննդի խորհրդանշանների հետ: Այս կերպարի օրինակներ են Արևհատը և արևային հատկանիշներով օժտված մյուս հերոսուհիները:

Իմաստուն կինը և Իմաստուն պառավը հաճախ հանդես են գալիս որպես գաղտնի գիտելիքների պահապաններ և միջնորդներ մարդկային ու գերբնական աշխարհների միջև:

Մեծ մայրը դրսևորվում է մարդկային, կենդանական, գերբնական և տիեզերական կերպարներով: Առանձնահատուկ նշանակություն ունի Արևամայրը՝ Արևի մայրը, որի երկնային բնույթն ու կենսատու զորությունը մայրության խորհրդանշական իմաստի հայկական դիցաբանական ինքնատիպ դրսևորում են: Ի տարբերություն Յունգի ընդհանուր արքետիպային հասկացության՝ այս կերպարն օժտված է մշակութային և դիցաբանական որոշակի առանձնահատկություններով:

Սարսափելի մայրը և Ստվերը, որոնք ներկայացված են դաժան խորթ մայրերի, կախարդների, կեղծ հարսնացուների և խաբեբա կանանց կերպարներով, մարմնավորում են ընտանիքի և հասարակության բարոյական կարգին սպառնացող կործանարար ուժերը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված հեքիաթներում գերակշռում են դրական կանացի կերպարները, որոնք կապված են իմաստության, պաշտպանության, անձնազոհության և վերածննդի գաղափարների հետ: Հետազոտության հիմնական գիտական ներդրումը համընդհանուր արքետիպային օրինաչափությունների և դրանց մշակութային առանձնահատուկ դրսևորումների տարբերակումն է, հատկապես՝ Արևային կույսի և տիեզերական Արևամոր կերպարների օրինակով: Այս կերպարները թույլ են տալիս ենթադրել, որ հայկական հեքիաթներում պահպանվել են արևային և վերածննդի հնագույն խորհրդանշական պատկերացումներ, թեև դրանց պատմական ծագման

ճշգրտումը պահանջում է հետագա ուսումնասիրություն: Հետազոտությունը ցույց է տալիս, որ հայկական բանահյուսության մեջ պահպանվել է կանացիության ինքնատիպ պատկերացում, որտեղ միահյուսվում են դիցաբանական խորհրդանշանները, բարոյական արժեքները և պատումային գործառույթները:

Antoaneta ANGUELOVA, PhD, Assistant Professor (Bulgaria)
Sofia University "St. Kliment Ohridski"

FEMALE CHARACTERS IN ARMENIAN FAIRY TALES: CLASSIFICATION AND ANALYSIS

Armenian fairy tales constitute an important part of the nation's cultural heritage, preserving ancient mythological beliefs, moral values, and traditional perceptions of femininity. Female characters appear in diverse forms, ranging from innocent maidens and wise women to supernatural protectors, maternal figures, and destructive antagonists. Their symbolic significance reflects both recurring archetypal patterns and distinctive features of Armenian folk imagination.

The principal aim of the study is to identify, classify, and analyse female characters in selected Armenian fairy tales according to their archetypal characteristics, narrative functions, and cultural symbolism. The central thesis is that these figures embody not only broader archetypal patterns but also culturally specific representations shaped by Armenian mythology and folklore. Particular attention is devoted to identifying distinctive manifestations of femininity, especially those associated with solar imagery, supernatural wisdom, and cosmic motherhood.

The research combines Carl Gustav Jung's theory of archetypes with Vladimir Propp's morphology of the folktale. Jung's approach provides a framework for interpreting recurring symbolic images, while Propp's methodology identifies the narrative roles performed by female characters, particularly those of donor, helper, sought-for person, and villain. Comparative textual analysis of eight Armenian fairy tales enables the identification of five principal analytical categories: the Maiden, the Wise Woman and Wise Old Woman, the Great Mother, the Terrible Mother, and the Shadow. These categories are employed as interpretative tools rather

than presented as a fixed taxonomy established by Jung.

The Maiden emerges as the most frequently represented female figure, ranging from endangered heroines to active protagonists possessing knowledge and supernatural abilities. A particularly significant finding is the identification of the Solar Maiden, a culturally distinctive subtype associated with golden hair, light, fertility, and regeneration, exemplified by Arevhat and Arevahat.

The Wise Woman and Wise Old Woman frequently act as guardians of hidden knowledge and mediators between the human and supernatural worlds.

The Great Mother appears in human, animal, supernatural, and cosmic forms. Of particular importance is Arevamayr, the Mother of the Sun, whose celestial nature and life-giving powers represent a distinctive Armenian mythological manifestation of maternal symbolism. Unlike Jung's general archetypal concept, this figure possesses specific cultural and mythological characteristics.

The Terrible Mother and the Shadow, represented by cruel stepmothers, witches, false brides, and deceptive women, embody destructive forces that threaten familial and moral order.

The analysis reveals a predominance of benevolent female figures associated with wisdom, protection, sacrifice, and renewal. Its principal contribution lies in distinguishing broader archetypal patterns from their culturally specific manifestations, particularly the Solar Maiden and the cosmic Mother of the Sun. These images suggest the preservation of archaic solar and regenerative symbolism within Armenian fairy tales, although their precise historical origins require further investigation. The study demonstrates that Armenian folklore preserves a distinctive representation of femininity in which mythological imagery, moral values, and narrative functions intersect.

Լևոն Մկրտչյան (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԱՇՈՑՔԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ ԵՎ ՓԱՄԲԱԿԻ ԳՈԳՀՈՎՏԻ ԲՐՈՆՋ-ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ GIS ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հյուսիսային Հայաստանի ամրոցների ուսումնասիրության առանցքային խնդիրներից է դրանց՝ ոչ միայն որպես առանձին հուշարձանների, այլև որոշակի լանդշաֆտում ձևավորված փոխկապակցված համակարգերի դիտարկումը: Այդ տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Աշոցքի սարահարթը և Փամբակի գոգհովիտը՝ միմյանցից բնական միջավայրով, ռելիեֆի կառուցվածքով և հաղորդակցական հնարավորություններով տարբերվող, սակայն ամրոցների նշանակալի խտությամբ բնորոշվող երկու գոտիներ: Ձեկուցման նպատակն է համեմատական տարածական վերլուծությամբ պարզել, թե որքանով կարող են նշված գոտիների ամրոցները մեկնաբանվել որպես տեղային ամրաշինական համակարգերի բաղադրիչներ, և ինչ դեր են ունեցել տեղագրությունը, տեսողական հաղորդակցությունը, բնական անցումները և հաղորդակցական ուղիները դրանց կազմակերպման մեջ:

Հետազոտության հիմնական գիտական խնդիրը ամրոցների տարածական մերձավորության և իրական գործառութային փոխկապակցվածության տարբերակումն է: Միևնույն տարածքում հուշարձանների առկայությունն ինքնին դեռևս համակարգի գոյության ապացույց չէ: Ուստի քննության են առնվում համակարգայնությունը հիմնավորող չափելի ցուցիչները՝ ամրոցների փոխադարձ տեսանելիությունը, տեսադաշտերի համընկնումը, բարձունքային դիրքը, անցումների ու գետահովիտների վերահսկման հնարավորությունը, ինչպես նաև հնարավոր հաղորդակցական երթուղիների նկատմամբ դրանց տեղադրությունը:

Մեթոդաբանությունը ներառում է թվային ռելիեֆի մոդելների հիման վրա կատարվող տեսանելիության դաշտերի (viewshed), փոխադարձ տեսանելիության (intervisibility), կուտակային տեսանելիության, նվազագույն ծախսատար ուղիների (least-cost path) և տարածական ցանցերի վերլուծություններ: Ստացված արդյունքները համադրվում են հուշարձանների տեղագրական, կառուցվածքային և ժամանակագրական տվյալների հետ՝ խուսափելով միայն GIS մոդելների վրա հիմնված

տեխնոլոգիական կանխորոշումներից:

Համեմատական մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտելու երկու տարբեր լանդշաֆտներում ամրաշինական կազմակերպման հնարավոր մոդելները՝ Աշոցքի բաց սարահարթային տարածքում և Փամբակի գծային գոգհովտային միջավայրում: Հետազոտությունը նպատակ ունի գնահատելու՝ տվյալ գոտիներում գործել են միասնական, ենթահամակարգերից կազմված, թե միմյանցից անկախ ամրոցային ցանցեր՝ միաժամանակ առաջարկելով Հյուսիսային Հայաստանի ամրաշինական լանդշաֆտների հետագա ուսումնասիրության համար կիրառելի մեթոդաբանական շրջանակ:

Levon MKRTCHYNAN (Armenia)
Shirak Center for Armenological Studies

THE SPATIAL ORGANIZATION OF BRONZE AND IRON AGE FORTRESSES ON THE ASHOTSK PLATEAU AND IN THE PAMBAK BASIN: A COMPARATIVE GIS ANALYSIS

One of the key issues in the study of the fortresses of northern Armenia is to consider them not merely as individual monuments, but also as components of interconnected systems formed within particular landscapes. From this perspective, the Ashotsk Plateau and the Pambak Basin are of particular interest. Although differing in their natural environments, topographic structures, and communication potential, both areas are characterized by a significant concentration of fortresses.

This paper aims to determine, through comparative spatial analysis, the extent to which the fortresses in these two regions may be interpreted as components of local fortification systems and to assess the roles played by topography, visual communication, natural passes, and communication routes in their spatial organization.

The principal research problem is to distinguish between the spatial proximity of fortresses and their actual functional interconnection. The presence of multiple sites within the same area does not, in itself, demonstrate the existence of an integrated system. The study therefore examines measurable indicators of systemic organization, including intervisibility between fortresses, the overlap of their fields of view, their

topographic and elevated positions, their potential to control passes and river valleys, and their location in relation to possible communication routes. The methodology includes viewshed, intervisibility, cumulative visibility, least-cost path, and spatial network analyses based on digital elevation models. The results are integrated with the topographic, architectural, and chronological data of the sites, thereby avoiding technologically deterministic interpretations based exclusively on GIS modelling.

The comparative approach makes it possible to identify potential models of defensive organization within two distinct landscapes: the open plateau environment of Ashotsk and the linear valley setting of Pambak. The study seeks to assess whether these regions contained integrated fortress networks, systems composed of smaller subsystems, or groups of independently functioning fortresses. At the same time, it proposes a methodological framework applicable to the further investigation of the fortified landscapes of northern Armenia.

Սուսաննա Ադամյան, պ.գ.թ. (Հայաստան)
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՊԱՏՄԱԿԱՆ ՇԻՐԱԿ ԳԱՎԱՌԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅԱՐՁԱՆԻ»

Հրաչյա Աճառյանի հայագիտական գործունեությունն առանձնանում է գիտական խորությամբ և աղբյուրագիտական բացառիկ հարստությամբ: Նրա ուսումնասիրություններն ընդգրկում են հայոց լեզվի գրեթե բոլոր բնագավառները՝ լեզվաբանություն, բարբառագիտություն, քերականություն, բառերի ստուգաբանություն, հայոց լեզվի պատմություն, մատենագիտություն և այլն: Շուրջ 60 ամյա գիտական գործունեության ընթացքում նա ստեղծել է մոտ 200 աշխատություն, որոնք կարևոր դեր ունեն հայոց լեզվի պատմության ուսումնասիրության գործում:

Հր. Աճառյանի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայերեն վիմագրական նյութի ուսումնասիրությունն ու պատմական Հայաստանի տարբեր շրջանների արձանագրությունների վերծանությունները: Այդ առումով կարևոր էր «Հայարձանի» ստեղծումը, որպես հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգություն: Հր. Աճառ-

յանը վիմագրերը համարում էր պատմական իրադարձությունների, հայոց լեզվի պատմության, տեղանունների, անձնանունների և լեզվական տարբեր երևույթների ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր: Դրանց միջոցով հնարավոր է պահպանել և գիտականորեն կարևորել հուշարձանների վրա պահպանված այն նյութը, որը ժամանակի ընթացքում կարող էր վնասվել կամ անհետանալ: Աշխատանքի հիմքում Պատմական Հայաստանի տարբեր շրջաններում և դրա սահմաններից դուրս պահպանված վիմագրերն են որպես հայ մշակույթի կենդանի վկայություններ: Հետևաբար «Հայարձանի» ստեղծումը կարելի է դիտարկել որպես Աճառյանի հայագիտական գործունեության այն կարևոր ուղղություններից մեկը, որի նպատակն էր վիմագրական նյութը պահպանել և այն օգտագործել հայոց պատմության և լեզվի գիտական ուսումնասիրության մեջ:

Հայերեն վիմագրերի հավաքածուն՝ «Հայարձան» ձեռագիրը, ամփոփում է 2000 վիմագրեր, որոնք մեր կողմից ուսումնասիրվել և համեմատվել է նորագույն շրջանի հրատարակությունների և գիտական վերծանությունների հետ: Այդ առումով փորձ ենք արել գնահատել Հր. Աճառյանի աշխատանքը որպես «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի ստեղծման նախնական տարբերակ: Այն բաղկացած է 1753 թերթից, ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 1551 թ. ընկած ոչ բոլոր վիմագրերը, վաղագույնը 881 թ. Մեծ Մասրիկի նշանավոր վիմագիրն է: Ձեռագրում բնակավայրերն ու հուշարձանները նշված են այբբենական կարգով՝ Ա-ից մինչև Ֆ: Տարածաշրջանային առումով ընդգրկված են վիմագրեր Պատմական Հայաստանի մի շարք բնակավայրերից, ինչպես նաև Կ.Պոլսից, Կիլիկիայից, արտերկրից, Ռուսաստանից, Վրաստանից և այլն: Սակայն վիմագրերի ամենամեծ բաժինը կազմում են Արևելյան Հայաստանի տարածքից գրառվածները: Անվանի լեզվաբանը, բնականաբար այս բոլոր վիմագրերն անձամբ չի տեսել, սակայն մասամբ խմբագրել է հատկապես անձնանունների, տարեթվերի տարընթերցումների, քերականության հետ կապված: Իր համար կարևոր էր վիմագրերի ճշգրիտ ընթերցումը՝ տալով տողերի քանակը և տառաձևերը: Այդ առումով նա նպատակ ուներ պահպանել ոչ միայն տեքստն ամբողջությամբ, այլև վիմագրի մշակութային միջավայրը: Յուրաքանչյուր արձանագրության դեպքում նա նշում է գտնվելու վայրը, թե հուշարձանի որ մասում է, փորձում է խմբագրել նախորդ հրատարակիչների վերծանությունները՝ համապատասխան հիմնավորումներով:

Մեզ համար առանձնահատուկ ուշադրության են արժանի Շիրակ գավառի պատմական հուշարձանների որմերին փորագրված վիմագրերը (Անի, Ագարակ, Արջո Առիճ, Երերույք, Արգինա, Բագնայր, Հառիճ, Մարմաշեն և այլն), որոնց թիվը հասնում է երկու հարյուրի: Մեր կողմից մանրամասն ուսումնասիրվել են դրանք և համեմատվել են տեղագրական ուսումնասիրությունների, նորագույն շրջանի հրատարակությունների և «Դիվան հայ վիմագրության» 10-րդ պրակում տեղ գտած վիմագրերի հետ:

Susanna ADAMYAN, PhD in History (Armenia)
Institute of Archaeology and Ethnography

THE EPIGRAPHIC HERITAGE OF THE HISTORICAL PROVINCE OF SHIRAK ACCORDING TO HRACHYA ACHARIAN'S "HAYARDZAN"

Hrachya Acharyan's contribution to Armenian studies is distinguished by its scholarly depth and exceptional richness of primary sources. His research encompasses virtually every major field of Armenian linguistics and philology, including linguistics, dialectology, grammar, etymology, the history of the Armenian language, bibliography, and related disciplines. Over the course of his nearly sixty-year scholarly career, Hr. Acharyan produced approximately 200 works, many of which remain of fundamental importance for the study of the history of the Armenian language.

The study of Armenian epigraphic material and the documentation and decipherment of inscriptions from different regions of historical Armenia occupy a particularly significant place in Hr. Acharyan's scholarly legacy. In this context, the compilation of ,,Hayardzan,, is of particular importance as an undertaking devoted to the preservation of the historical and cultural heritage of the Armenian people. Hr. Acharyan regarded inscriptions as important primary sources for the study of historical events, the history of the Armenian language, personal names, and a wide range of linguistic phenomena. Epigraphic sources make it possible to preserve and systematically examine material inscribed on monuments that might otherwise have been damaged, altered, or lost over time.

The foundation of ,,Hayardzan,, consists of inscriptions preserved in

various regions of historical Armenia and beyond its borders, which may be regarded as living testimonies to Armenian cultural heritage. Thus, the compilation of ,,Hayardzan,, can be viewed as one of the important directions of Hr. Acharyan's Armenological scholarship, aimed both at preserving epigraphic material and at making it available for the scholarly study of Armenian history and language.

The collection of Armenian inscriptions preserved in the ,,Hayardzan,, manuscript comprises approximately 2,000 inscriptions. We have examined these materials in detail and compared them with publications and scholarly readings produced in the modern period. In this regard, we have attempted to assess Hr. Acharyan's work as an early precursor to the monumental Corpus of Armenian Inscriptions. The manuscript consists of 1,753 folios and contains inscriptions dating from antiquity to 1551, although it does not claim to include all inscriptions from this chronological span. The earliest inscription represented in the manuscript is the well-known inscription of Mets Masrik, dated to 881.

The settlements and monuments in the manuscript are arranged alphabetically, from A to F. In geographical terms, the collection encompasses inscriptions from numerous settlements throughout historical Armenia, as well as from Constantinople, Cilicia, Russia, Georgia, and other regions beyond the Armenian Highlands. The largest body of material, however, consists of inscriptions recorded in Eastern Armenia.

Naturally, Hr. Acharyan could not have personally examined all of the inscriptions included in the manuscript. Nevertheless, he critically edited a substantial portion of the material, paying particular attention to personal names, variant readings of dates, and grammatical features. Accurate transcription and reading of the inscriptions were of central importance to him. Accordingly, he recorded the number of lines and paid close attention to the forms of individual letters. His objective was therefore not merely to preserve the verbal text of an inscription, but also to document aspects of its physical and cultural context.

For each inscription, Hr. Acharyan provides information concerning its location and identifies the particular part of the monument on which it is found. Where necessary, he also critically revises the readings proposed by earlier scholars and supports such revisions with appropriate philological arguments. His approach demonstrates an awareness that an inscription

should be studied not simply as an isolated textual artifact, but as an integral component of the monument on which it is preserved.

Of particular significance for our research are the inscriptions carved on the walls and architectural elements of the historical monuments of the province of Shirak, including those of Ani, Agarak, Arjo-Arich, Yereruyk, Argina, Bagnair, Harich, Marmashen, and other sites. Their total number approaches two hundred.

We have examined these inscriptions in detail and compared Hr. Acharyan's records with topographical and historical studies, modern scholarly publications, and the inscriptions included in Volume X of the Corpus of Armenian Inscriptions, devoted to the Province of Shirak. Consequently, the Shirak material preserved in ,,Hayardzan,, constitutes a particularly valuable body of evidence for the study of the region's historical geography, cultural heritage, linguistic history, and epigraphic tradition. Its comparison with the modern corpus of Shirak inscriptions makes it possible not only to evaluate Hr. Acharyan's contribution to Armenian epigraphy, but also to identify changes in readings, interpretations, and the state of preservation of individual monuments over the course of the twentieth and twenty-first centuries

Կարինե Ալեքսանյան, պ.գ.թ., դոցենտ (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՈՐԲԵՐԻՆ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920-1921)

Ուսումնասիրությունը քննության է ենթարկում 1920-21թթ.թուրքական բռնազավթման շրջանում արևմտահայ որբերին ոչնչացնելու թուրքական ռազմավարությունը:

1920թ. սեպտեմբերին արշավելով Արևելյան Հայաստան՝ թուրքական իշխանությունները ձեռնամուխ են լինում արևմտահայության բնաջնջման իրենց հրեշավոր ծրագրի շարունակությանը՝ ոչնչացնելով այստեղ ապաստանած մեծ թվով արևմտահայ որբերի:

1920թ. նոյեմբերին գրավելով և մինչև 1921թ. ապրիլը ռազմակալելով Ալեքսանդրապոլի գավառը, թուրք զավթիչները մի կողմից դրդում են

Ալեքսանդրապոլում իրենց կողմից ստեղծված խորհրդային իշխանությանը՝ հեղկոմին թշնամական վերաբերմունք ցույց տալ Ամերկոմի ներկայացուցիչներին, մյուս կողմից՝ վերջիններիս համոզում են որբերին տեղափոխել Կարս, որն իբր ավելի ապահով էր:

Իրականում նպատակ ունեին վտանգավոր տեղափոխության ժամանակ սովի և համաճարակի միջոցով ոչնչացնել որբերին, ինչպես նաև տիրանալ Ամերկոմի որբանոցների ունեցվածքին և սննդամթերքին:

Մանրամասն քննության ենք ենթարկում Ալեքսանդրապոլում որբերին կենտրոնացնելու Ամերկոմի քաղաքականությունը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել Հայոց մեծ եղեռնից հետո Ալեքսանդրապոլի գավառում ապաստանած արևմտահայության բեկորներին տեղափոխությունների միջոցով ոչնչացնելու ռազմավարությանը: Թուրք դիվանագետները օգտվելով Ամերկոմի՝ արևմտահայ որբերին և գաղթականներին կենտրոնացնելու որոշ հանգամանքներից բխող որոշումից, մշակել և իրականացրել են տեղափոխությունների միջոցով նրանց ոչնչացումը: 1921թ փետրվար-մարտին որբանոցների պաշարեղենը յուրացնելուց հետո վերջնագրով ստիպում են Ամերկոմի ներկայացուցիչներին հետ վերադարձնել որբերին Կարսից Ալեքսանդրապոլ: Վստահ լինելով, որ բոլշևիկները վերաբերմունքի պատճառով ամերիկացիները կհեռանան Հայաստանից թուրքերը ձգտում էին սովի մատնել հազարավոր որբերի:

Հիմնվելով առաջնային աղբյուրների և ժամանակի մամուլի վրա՝ բացահայտվել և վերլուծվել են հայոց ցեղասպանության թուրքական իշխանության ռազմավարությունը և իրականացման մեխանիզմերը:

Արդյունքներ: Թուրքական զինվորական իշխանությունների գործունեության վերլուծությունը ցույց է տվել, որ Ալեքսանդրապոլի գավառում ապաստանած թուրքական յաթաղանից մազապուրծ արևմտահայ որբերը 1920-21թթ.գոհ են գնացել թուրքական շարունակվող ցեղասպան քաղաքականությանը: Տեղափոխությունները մի վայրից մյուսը թուրք ջարդարարներին հնարավորություն են ընձեռել առանց լրացուցիչ ջանքերի մահվան դատապարտել անպաշտպան որբերին սովի, համաճարակների, ավազակային հարձակումների միջոցով: Բացի այդ, դա նրանց հնարավորություն էր տվել թալանել թե՛ Ամերկոմի պաշարեղենը և թե՛ որբերի վերջին ունեցվածքը:

Karine ALEKSANYAN
PhD in History, Associate Professor (Armenia)
Shirak Center for Armenological Studies

THE TURKISH STRATEGY FOR THE EXTERMINATION OF WESTERN ARMENIAN ORPHANS DURING THE OCCUPATION OF ALEXANDROPOL DISTRICT (1920–1921)

In September 1920, the Turks, having invaded Eastern Armenia, continued their monstrous plan to destroy the Armenian people, destroying numerous Western Armenian migrants and orphans who had taken refuge here. Having seized the Alexandropol province in November 1920 and occupied it until April 1921, the Turks, on the one hand, incited the revolutionary committee they had created in Alexandropol to show hostility to the representatives of the American Committee, on the other hand, they persuaded the latter to transfer the orphans to Kars, where it was supposedly safer. In reality, their goal was to destroy them with famine and epidemics during a dangerous move, as well as to seize food. In February-March 1921, the Turks, having appropriated the stocks of orphanages, forced them to return the orphans from Kars to Alexandropol with an ultimatum.Being sure that the Americans would leave Armenia because of the Bolsheviks' position, they sought to starve thousands of orphans. However, since the first days of the establishment of Soviet power in Armenia, the Soviet-Armenian government has shown a special attitude towards the Americans engaged in charity in the Middle East, realizing that without their help it is impossible to solve the issue of custody of thousands of refugees A new temporary government body created in Alexandropol is trying to solve the problems of refugees and orphans brought to an extremely distressed state even before the Turks leave. wich faild as a result of the Turks creating dictatorship. But it failed due to the formation of dual power by the Turkish government.

Միրանուշ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, բ.գ.թ. (Հայաստան)
Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԱՎԳՈՒՍՏ ՖՈՆ ՀԱՔՍՏՀԱՈՒԶԵՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ[5]

Զեկուցումը նվիրված է պրուսացի պաշտոնյա, ազգագրագետ և ճանապարհորդ բարոն Ավգուստ ֆոն Հաքստհաուզենի (1792-1866) ուղեգրության քննությանը, որում Հայաստանի և հայ ժողովրդի վերաբերյալ հսկայածավալ նյութ կա ամփոփված: Զեկուցման նպատակն է քննության ենթարկել ուղեգրության մեջ տեղ գտած հայ բանահյուսական նմուշները: Զեկուցման նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել հայ ժողովրդական բանահյուսության նմուշների գրառումները, մասնավորապես՝ ժանտախտի ավանդազրույցի՝ աշխատության մեջ տեղ գտած տարբերակը, որ ճանապարհորդին հետաքրքրել է որպես տվյալ ավանդազրույցի՝ հայ իրականության մեջ տարածված օրինակ: Այս ավանդազրույցը որպես համաշխարհային գրականության թափառական սյուժեներից մեկը, տարածված լինելով աշխարհի տարբեր երկրներում, որոշակի առանձնահատուկ գծերով ի հայտ է գալիս նաև հայ բանահյուսության մեջ և դրսևորում ազգային մտածողությանը բնորոշ հատկանիշներ: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են պատմահամեմատական, կենսագրական, հերմենևտիկ և միֆոլոգիական մեթոդները: Ուսումնասիրության արդիականությունը և գիտական նորույթը պայմանավորված են հայ և եվրոպական գրական կապերի վերհանմամբ, առնչությունների բացահայտմամբ և նորովի մատուցմամբ: Ավգուստ ֆոն Հաքստհաուզենը, Կովկասում լինելով ընդամենը մի քանի օր, իր նշանավոր ուղեգրության մեջ մեծ տեղ է հատկացրել Հայաստանին և հայությանը, ներկայացրել է հայոց պատմության կարևորագույն դրվագները, հայ ժողովրդի կենցաղավարությունը, անդրադարձել նաև Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին, նրանց նիստուկացին, հայ ժողովրդական բանահյուսության մի շարք նմուշներ ներառել իր երկում: Հայ բանահյուսության նմուշները, որ տեղ են գտել Հաքստհաուզենի ուղեգրության մեջ, հետաքրքրության են արժանացել նաև այլ օտար բանագետների, բանահավաքների, ուսում-

[5] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ (հետազոտական նախագիծ՝ № 23-2PHD-6B002):

նասիրողների կողմից: Սրա մասին են վկայում այն փաստերը, որ հայկական բանահյուսական որոշ նմուշներ այլազգի հեղինակների կողմից ժամանակին ներառվել են տարբեր գրքերում, որոնց համար սկզբնաղբյուր է հանդիսացել Հաքստհաուզենի ուղեգրությունը: Սա վկայությունն է այն իրողության, որ հայ ժողովրդական բանահյուսությունը անքակտելի և կարևորագույն մասն է համաշխարհային բանահյուսության, բայցևայնպես դրսևորում է որոշակի առանձնահատկություններ՝ առաջին հերթին պայմանավորված ազգային մտածողությամբ, ապա նաև մշակութային ինքնատիպությամբ և առանձնահատկություններով:

Siranush PARSADANYAN, PhD in Philology (Armenia)
Institute of Literature after Manuk Abeghian

AUGUST VON HAXTHAUSEN AND ARMENIAN FOLKLORE[6]

The paper examines the travel account of Baron August von Haxthausen (1792–1866), a Prussian official, ethnographer, and traveler, which contains a vast body of material on Armenia and the Armenian people. The purpose of the paper is to examine the Armenian folkloric materials included in his travel account.

This objective gives rise to several specific tasks, including the study of the records of Armenian folklore, with particular attention to the version of the plague legend included in the work. This legend attracted the traveler's interest as an example of a narrative that was widespread in Armenian society.

As one of the migratory plots of world literature, the legend is found in various forms across different countries. In Armenian folklore, however, it emerges with certain distinctive features and reflects characteristics inherent to the national worldview and modes of thought.

The study employs historical-comparative, biographical, hermeneutic, and mythological methods. Its relevance and scholarly novelty lie in revealing, examining, and presenting from a new perspective the literary and cultural connections between Armenia and Europe, as well as identifying the

[6] This work was supported by the Science Committee of RA (Research project № 23-2PHD-6B002).

interactions and points of contact between them.

Although August von Haxthausen spent only a few days in the Caucasus, he devoted considerable attention to Armenia and the Armenian people in his renowned travel account. He presented significant episodes from Armenian history, described the everyday life and customs of the Armenian people, and addressed the ethnic minorities living in Armenia and their way of life. He also incorporated a number of examples of Armenian folklore into his work.

The Armenian folkloric materials included in Haxthausen's travel account subsequently attracted the attention of other foreign folklorists, collectors, and scholars. This is evidenced by the fact that certain Armenian folkloric materials were later incorporated by foreign authors into various publications, with Haxthausen's travel account serving as their source.

This demonstrates that Armenian folklore constitutes an integral and significant part of world folklore, while at the same time exhibiting distinctive characteristics shaped primarily by the national worldview, as well as by Armenia's unique cultural identity and traditions.

Համլիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, պ.գ.թ., (Հայաստան)
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Ասպոիկ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ (Հայաստան)
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Ռոման ՀՈՎՍԵՓՅԱՆ , կ.գ.թ (Հայաստան)
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀԱՅԵՐԻ ՀԱՑԱԹԽՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇՈՒՐՋ (ԸՍՏ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)[7]

Հացաթխման մշակույթը, որպես ուտեստի մշակույթի հիմնական տարրերից մեկը, ոչ միայն կենսապահովման մշակույթի մաս է կազմում,

[7] Սույն զեկուցումը ներկայացվում է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի 24SSAH-6A003 «Սյունիքի ավանդական սննդի համակարգի միջգիտակարգային ուսումնասիրություն» գիտական նախագծի շրջանակում:

այլ նաև դուրս է դրա սահմաններից: Հացը սրբացվել և սրբացվում է, ինչն արտացոլվում է բանավոր խոսքում, հացի հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքում, հացի հետ կապված հավատալիքներում: Հացը և հացաթխման մշակույթը ուրույն դեր ունեն նաև մարդու կենսափուլերին առնչվող դրվագներում, առօրյա և տոնածիսական կյանքում:

Սյունիքի հացի և հացաթխման մշակույթը պատկերել են Երվանդ Լալայանը, Ստեփան Լիսիցյանը, ինչպես նաև Սյունիքին և նրա առանձին բնակավայրերին նվիրված ուսումնասիրությունների հեղինակներ, որոնք օգտվել են և՛ վերը հիշատակված մեծանուն ազգագրագետներից, և՛ հիմնվել են սեփական ու այդ մշակույթի այլ կրողներից գրանցած հիշողությունների ու պրակտիկաների վրա:

Սույն զեկուցման նպատակն է քննարկել Սյունիքի հացաթխման մշակույթում վերջին ութսուն տարիներին կատարված փոփոխությունները, դրանց պատճառները և ցույց տալ, թե մեր օրերում հացաթխման ավանդական մշակույթի որ տարրերն են կենսունակ, որոնք են միայն հիշողություններում պահպանված, որոնք են գրեթե մոռացվել և ինչ նոր պրակտիկաներ են ձևավորվել: Վերջիններս վերաբերում են հացաթխման նախապատրաստական փուլին, հացաթխման բուն գործընթացին ու դրա մասնակիցներին, հացի պահեստավորման ձևերին, հարսանեկան ու սգո առիթներով հացաթխման առանձնահատկություններին, հացաթխման գործում տղամարդկանց ներգրավվածությանը, հացաթխմանն առնչվող սովորույթներին և հավատալիքներին, հացաթխմանը հաջորդող փուլին, գյուղական ընտանիքներում թոնրի հացաթխման մշակույթի դուրս մղման խնդրին, հացաթխման նոր պրակտիկաների ձևավորմանը և հարակից այլ հարցերի:

Զեկուցման նյութը հիմնված է 2021-2026 թթ. Սյունիքի մարզի Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի համայնքների 38 բնակավայրերում անցկացված հետազոտությունների վրա, ինչը թույլ է տվել վերոնշյալ հարցադրումների վերաբերյալ դուրս բերել համեմատական պատկեր: Օգտագործել ենք որակական հետազոտության մեթոդաբանություն և դիտարկման մեթոդ: Սյունիքում ունեցել ենք 91 հարցազրույց, որոնց մասնակցել են 174 բանասացներ, որոնցից 128-ը՝ կին, 46-ը՝ տղամարդ:

Hasmik ABRAHAMYAN, PhD in History (Armenia)
Institute of Archaeology and Ethnography
Roman HOVSEPYAN, PhD in Biology (Armenia)
Institute of Archaeology and Ethnography

ON THE CULTURE OF BREAD-BAKING AMONG ARMENIANS (BASED ON ETHNOGRAPHIC MATERIALS FROM SYUNIK)[8]

The culture of bread-making, as one of the most important elements of food culture, is not merely a component of the culture of subsistence, but also extends beyond its boundaries. Bread has always been and continues to be regarded as sacred, which is reflected in oral traditions, attitudes toward bread and beliefs associated with it. Bread and the culture of bread-making also play a distinctive role in rites of passage, as well as in everyday and festive-ritual life.

The culture of bread-making in Syunik is described in the works of Yervand Lalayan, Stepan Lisitsyan, and other researchers, who studied Syunik and its individual settlements. These authors drew not only on the works of the aforementioned prominent ethnographers, but also on their own recollections and knowledge of local customs, as well as on information recorded from other bearers of this cultural tradition.

The aim of this report is to examine the changes that have taken place in the bread-making culture of Syunik over the past eighty years and the reasons behind them, as well as to identify which elements of the traditional bread-making culture remain in active use today, which survive only in memory, which have been almost entirely forgotten, and what new practices have emerged.

The aforementioned topics concern the preparatory stage of bread-making, the baking process itself and people involved in it, methods of bread storage, specific practices associated with bread-making for weddings and funerals, the involvement of men in bread-making, customs and beliefs related to bread-making, the post-baking stage, the displacement of the traditional tonir (traditional Armenian underground oven)-based bread-

[8] This report is presented within the framework of the scientific project 24SSAH-6A003, "An Interdisciplinary Study of the Traditional Food System of Syunik," funded by the Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia.

making culture in rural households, the emergence of new bread-making practices, and other related issues.

The material, presented in the report, is based on research conducted between 2021 and 2026 in 38 settlements across the Sisian, Goris, Kapan, and Meghri communities of Syunik Province of Armenia. This research enabled us to develop a comparative picture of the issues outlined above. We employed a qualitative research methodology and the observation method. A total of 91 interviews were conducted, involving 174 informants, 128 of whom were women and 46 were men.

Համլիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, արվ. թեկնածու, դոցենտ (Հայաստան)
Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԵՐԳԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Երգարանը՝ որպես աղբյուրագիտական և հետազոտական նյութ, միջգիտակարգային ֆենոմեն է, որը միավորում է երաժշտագիտության, բանահյուսության, սոցիոլոգիայի, պատմագիտության և գրքի պատմության հետազոտական դաշտերը: Կան ձեռագիր և տպագիր երգարաններ: Ձեռագիր երգարանը պարզապես տեքստերի հավաքածու չէ. այն օժտված է սեփական կենսագրությամբ, հանդիսանում է կազմողի անհատականության շարունակությունը և արտացոլում է ձեռագրի ստեղծման մշակութային-պատմական համատեքստը:

Ժամանակակից հայրենական բանագիտության մեջ ձեռագիր երգարանները հետազոտվում են որպես տեքստային աղբյուր, ինչպես նաև ուշադրություն է դարձվում ձեռագրի կազմման պրակտիկայի և համատեքստի վերլուծությանը: Երգարանների ուսումնասիրությունը հիմնականում իրականացվում է՝ ելնելով նրանից, թե ձեռագրեր կազմելու պրակտիկան ինչ տեղ է զբաղեցնում կենսագործունեության մեջ: Առավել ընդունված է ձեռագրից դեպի կազմողի անհատականության, նրա միջավայրի (համայնքի), ամբողջ հասարակության և ժամանակակից մշակույթի ըմբռնման ուսումնասիրությունը:

Մեր ուսումնասիրության առարկան տպագիր երգարաններն են:

Կարևորում ենք այն, որ հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի հրատարակած 5 գրքերից մեկը Տաղարան է /Վենետիկ, 1513/: Նշենք, որ 2014թ. լույս է տեսել 1513-1921թթ. հրատարակված Հայերեն երգարանների մատենագիտությունը, որը կազմել է Կարինե Հարոյանը՝ առաջաբանում իրավացիորեն նկատելով. «Հայ ժողովրդի պատմական զարգացման քառուղիներում երգարաններն ունեցել են կարևոր դեր և նշանակություն՝ ժողովրդի պատմական երթը, հոգևոր մշակույթը ապագա սերունդներին տեսանելի և հասանելի դարձնելու առումով, ահա ինչու նրանց ուսումնասիրությունը բխում է ազգային շահերից»:

Երգարանը կարող ենք դիտարկել որպես՝

- Բանահյուսական և տեքստաբանական աղբյուր
- Երաժշտագիտական և նոտագրական հիմք
- Սոցիոմշակութային և հասարակական վավերագիր
- Քաղաքականության, գաղափարախոսության և գրաքննության ցուցիչ
- Գրքի պատմություն և վիզուալ մշակույթ

Երգարանների ուսումնասիրության մեջ հետազոտական հիմնական մեթոդներից են.

Համեմատական-տիպաբանական վերլուծությունը.

Տարբեր ժամանակաշրջանների կամ տարածաշրջանների երգարանների համադրում՝ ընդհանրություններն ու տարբերությունները վեր հանելու համար:

Քանակական և որակական բաղադրիչների վերլուծությունը.

Տեքստերում հաճախ հանդիպող բառերի, թեմաների, կերպարների կամ մեղեդիներում լադային հնչյունաշարերի մոդելների քանակական հաշվարկ և իմաստային վերլուծություն:

Դիսկուրս վերլուծությունը.

Երգարանների առաջաբանների, ծանոթագրությունների և տեքստային ընտրության վերլուծություն՝ հասկանալու համար կազմողի կամ հրատարակչի գաղափարական ու մշակութային նպատակադրումները:

Խորհրդային մշակութային քաղաքականության մեջ երգարվեստը դիտարկվում էր ոչ թե պարզապես ժամանց, այլ որպես «զանգվածային

վերահսկողության և դաստիարակության» ամենահզոր գործիքներից մեկը: Քանի որ երգերը հեշտությամբ էին մտապահվում և էմոցիոնալ առումով վարակիչ էին, դրանք դարձան գաղափարախոսության «նուրբ» ներարկման հիմնական միջոցը:

Մեր զեկուցման մեջ քննության ենք առել 1920-1950-ական թթ. Հայաստանում հրատարակված երգարանների տիպաբանական և բովանդակային առանձնահատկությունները, կարևորելով մի կողմից պատմամշակութային համատեքստը, մյուս կողմից՝ արժևորումը՝ իբրև մշակութային ժառանգություն:

Hasmik HARUTYUNYAN, PhD in Art Studies,
Associate Professor (Armenia)
Yerevan Komitas State Conservatory, Gyumri Branch
Shirak Center for Armenological Studies

THE SONGBOOK AS A SOURCE AND SUBJECT OF RESEARCH

The songbook, viewed as a source and subject of research, is an interdisciplinary phenomenon that brings together the fields of musicology, folklore studies, sociology, history, and book history. Songbooks exist in both manuscript and printed forms. A handwritten songbook is not merely a collection of texts; it has its own biography, serves as an extension of its compiler's personality, and reflects the cultural and historical context in which the manuscript was created.

In contemporary Armenian folklore studies, manuscript songbooks are examined as textual sources, with particular attention also given to the analysis of the practices and contexts of their compilation. The study of songbooks is primarily approached through an examination of the role that the practice of compiling manuscripts plays in the compiler's life. One of the most widely adopted approaches moves from the manuscript itself toward an understanding of the compiler's personality, their social environment (community), society as a whole, and the culture of the period. The subject of

our study is printed songbooks. It is important to note that one of the five books published by Hakob Meghapart, the first Armenian printer, was *Tagharan* (*Book of Songs*), published in Venice in 1513. In 2014, a bibliography of Armenian-language songbooks published between 1513 and 1921 was issued, compiled by Karine Haroyan. In the introduction, she rightly observes: "Throughout the various crossroads of the Armenian people's historical development, songbooks have played an important role in making the people's historical journey and spiritual culture visible and accessible to future generations; therefore, their study serves the national interest."

Songbooks can be examined as:

- Folklore and textual-critical sources;
- Foundations for musicological research and musical notation;
- Sociocultural documents and records of public life;
- Indicators of political agendas, ideology, and censorship;
- Artifacts of book history and visual culture.

Comparing songbooks from different periods or regions in order to identify their similarities and differences.

Counting and interpreting the frequency of words, themes, and characters in song texts, as well as identifying and analyzing patterns of modal scales in melodies.

Examining the prefaces, annotations, and textual selections of songbooks to understand the ideological and cultural objectives of their compilers or publishers.

Within Soviet cultural policy, song culture was regarded not merely as entertainment but as one of the most powerful instruments of "mass control and education." Because songs were easy to memorize and emotionally compelling, they became a major means of subtly disseminating ideology.

In this paper, we examine the typological and thematic characteristics of songbooks published in Armenia during the 1920s–1950s, highlighting, on the one hand, their historical and cultural context and, on the other, their value as part of the cultural heritage.

Դավիթ ԿՈՒՄԱՐ, բ.գ.դ. (Հնդկաստան)
Բանարասի համալսարան

ԿԱՆԱՆՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՁԱՅՆԱԳՐՈՒՄԸ. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՆՈՒԹԵՐ ՀԱՐՅԱՆԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

2012–2017 թվականներին Հյուսիսային Հնդկաստանի Հարյանա նահանգի գյուղական համայնքներում իրականացված դաշտային հետազոտությունների հիման վրա ներկայացված սույն դաշտային աշխատանքի հաշվետվությունն անդրադառնում է տնային և ծիսական միջավայրերում կանանց ժողովրդական երգերի ձայնագրման ընթացքում առաջացող մեթոդաբանական դժվարություններին և անհրաժեշտ ճշգրտումներին:

Երգերը դիտարկելով ոչ թե որպես առանձին, համատեքստից անջատված բանավոր տեքստեր, այլև որպես սոցիալական որոշակի միջավայրում իրագործվող պրակտիկա՝ ուսումնասիրությունը շեշտադրում է դրանց կապը ազգակցական հարաբերությունների, հավաքական հիշողության և առօրյա փոխազդեցությունների հետ:

Ձայնագրման աշխատանքներն իրականացվել են բակերում, պատշգամբներում, տաճարներում և հարսանեկան հավաքույթների ընթացքում: Դրանք հիմնվել են հետազոտողի անմիջական ներկայության, երգեցողությանը փոխադարձ մասնակցության և համատեղ ունկնդրման վրա՝ պաշտոնական հարցազրույցների փոխարեն: Միջավայրային ինչյուններին՝ առօրյա զրույցներին, երեխաների խաղին և կենցաղային գործունեության ձայներին, ուշադրություն դարձնելը կարևոր նշանակություն է ունեցել կենդանի միջավայրում երգային կատարումների ընկալման և մեկնաբանման համար:

Հիմնավորվում է այն տեսակետը, որ դաշտային ձայնագրումը ոչ այնքան փաստագրում է, որքան մասնակցություն շարունակական հաղորդակցական իրադարձությանը: Առաջարկվում է «ազգագրություն ձայնի միջոցով» մեթոդաբանական մոտեցումը, որը միավորում է ունկնդրումը, ձայնագրումը և մեկնաբանումը՝ դիտարկելով դրանք որպես գիտելիքի ստեղծման միասնական գործընթացի բաղադրիչներ:

Այս տեսանկյունից փաստագրումն ինքնին վերածվում է սոցիալական գործողության: Աշխատանքում ընդգծվում է նաև այն, որ դաշտային ձայնագրությունները հետազոտության մասնակից կանանց կրկին

տրամադրելը նպաստել է իրենց ստեղծագործական գիտելիքի և արտահայտչական կարողությունների արժևորման վերաբերյալ նրանց պատկերացումների վերափոխմանը:

Devender KUMAR, Doctor of Philology (India)
Banaras Hindu University

RECORDING WOMEN'S FOLK SONGS: NOTES ON FIELDWORK IN RURAL HARYANA

Drawing on fieldwork conducted between 2012 and 2017 in rural Haryana, North India, this fieldwork report reflects on the methodological challenges and adjustments required when recording women's folk songs in domestic and ritual settings. Rather than treating songs as detachable verbal texts, the study approaches singing as a situated social practice embedded in kinship relations, shared memory, and everyday interaction. Recording sessions took place in courtyards, verandas, temples and wedding gatherings and relied on participant presence, reciprocal singing, and collaborative listening rather than formal interviews. Attention to ambient sound—casual conversation, children's play, and household activity-proved essential for understanding performance within lived environments. The report argues that field recording functions less as documentation than as participation in an ongoing communicative event, and proposes "ethnography through sound" as a methodological orientation which integrates listening, recording, and interpretation into a single process of knowledge production. Looked at from this perspective, documentation itself becomes a social act. The report also highlights how circulating field recordings back to consultants further reshaped how women singers valued their expressive knowledge.

Միդնի ՏԻՐՇՎԵԼ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
Քարլթոնի քոլեջ

ԲՐԵՀՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԱԳ ԳՈՂԱՑՈՂ ԿԱՆԱԽԱՐԴԵՐԸ ՎԱՂ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԻՌԼԱՆԴԻԱՅՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ ԵՎ ՎԵՃԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Զեկուցման մեջ քննվում են Իռլանդիայում դատավարությունների սակավության և լայնածավալ վիուկորսության բացակայության պատճառները՝ ավանդական իրավական համակարգերի և տեղական ժողովրդական հավատալիքների փոխազդեցության համատեքստում: Մինչդեռ վաղ նոր ժամանակների Եվրոպայի մի շարք տարածաշրջաններում վիուկորսությունը լայն տարածում էր ստացել, Իռլանդիայում տեղի ունեցան կախարդության վերաբերյալ ընդամենը մի քանի խոշոր դատավարություններ: Պատմական այս տարբերությունը բացատրելու նպատակով ուսումնասիրության մեջ առանձնացվում են փոխկապակցված երեք գործոններ՝ բրեհոնական (կելտական) իրավունքը, անգլիական ընդհանուր իրավունքը և կախարդության վերաբերյալ իռլանդական ժողովրդական հավատալիքները:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տարածված այն հավատալիքին, ըստ որի՝ վիուկները կարող էին նապաստակների կերպարանք ընդունել և գյուղացիներից կաթ ու կարագ գողանալ, հատկապես մայիսի սկզբի հետ կապված սեզոնային անցման շրջանում: Ի տարբերություն եվրոպական այլ տարածաշրջաններում տարածված պատկերացումների՝ իռլանդական ժողովրդական ավանդույթներում վիուկները հաճախ ներկայացվում էին որպես սեզոնային և տնտեսական վնաս պատճառող էակներ, այլ ոչ թե հասարակության համար ի սկզբանե բռնության կամ գոյաբանական սպառնալիքի աղբյուրներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը պատմահամեմատական վերլուծությունն է՝ արխիվային փաստաթղթերի, հին իռլանդական իրավական ձեռագրերի թարգմանությունների, ժամանակակից պատմական վկայությունների և երկրորդային գիտական գրականության մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Քննության առանցքում երկու պատմական դեպք է՝ 1324 թվականին Քիլքեննիում տեղի ունեցած Քայթելերի գործը

և 1711 թվականի Այլենդմաջիի վհուկների դատավարությունը: Ուսումնասիրելով այս գործերի դատական ընթացակարգերը, ապացույցների գնահատման սկզբունքները և մշակութային համատեքստերը՝ հոդվածում բացահայտվում են մայրցամաքային Եվրոպայի և Շոտլանդիայի՝ կախարդության հետապնդման մոդելների ու իռլանդական դատական պրակտիկայի միջև եղած տարբերությունները:

Sydney TIRSCHWELL (United States of America)
Carleton College

BREHON LAW AND BUTTER-STEALING WITCHES IN EARLY MODERN IRELAND: LEGAL TRADITIONS, FOLK BELIEFS, AND SAFEGUARDS AGAINST WITCH-HUNTING

This paper examines the scarcity of witch trials and the absence of large-scale witch-hunting in Ireland through the interaction of traditional legal systems and indigenous folk beliefs. While witch-hunting became a widespread phenomenon in several parts of early modern Europe, Ireland experienced only a limited number of major witch trials. To explain this historical divergence, the study focuses on three interconnected factors: Brehon (Celtic) law, English common law, and Irish folk beliefs concerning witchcraft. Particular attention is paid to the popular belief that witches could transform into hares and steal milk and butter from farmers, especially around the seasonal transition associated with the beginning of May. Unlike representations of witches elsewhere in Europe, Irish folk traditions often portrayed them as sources of seasonal and economic harm rather than as inherently violent or existential threats to society.

The research employs historical-comparative analysis and close readings of archival documents, translated early Irish legal manuscripts, contemporary accounts, and secondary scholarship. Two historical case studies form the core of the investigation: the Kyteler case in Kilkenny in 1324 and the Islandmagee witch trial of 1711. By examining the legal proceedings, evidentiary practices, and cultural contexts of these cases, the paper explores the differences between continental European and Scottish models of

witchcraft prosecution and Irish judicial practice in cases of witchcraft. It argues that the interaction of legal traditions, institutional circumstances, and local beliefs may have acted as a set of safeguards that inhibited the escalation of witchcraft accusations into widespread persecution. The study contributes to the comparative history of witchcraft by shifting attention from the causes of witch-hunting to the social, legal, and cultural conditions that prevented its large-scale development in particular historical contexts.

Թամար ՇՈՓՈՒՐԱՇՎԻԼԻ, փիլ. գիտ. դոկտոր (Վրաստան)
Իլիայի պետական համալսարան

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ԱՆՏՈՆ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ԴՊՐՈՑԻ ՕՐԻՆԱԿԸ

Զեկուցման մեջ կքննարկվի XVIII դարում փիլիսոփայության բնագավառում վրաց-հայկական փոխազդեցությունը, որի զարգացմանը նպաստել է 1720–1788 թվականներին Վրաստանի պատրիարք Անտոն Բագրատիոնին:

Անտոնը հիմնադրել է երկու աստվածաբանական ճեմարան և խթանել արիստոտելյան աշխատությունների ու դրանց մեկնությունների թարգմանությունը, այդ թվում՝ հայերենից վրացերեն, ինչն իր հերթին նպաստել է երկու ժողովուրդների մտավոր մերձեցմանը: Նրա նպատակն էր դպրոցներն ապահովել թարգմանված ուսումնական նյութերով:

Բացի թարգմանություններից՝ Անտոնը հեղինակել է երկու ինքնուրույն փիլիսոփայական աշխատություն՝ «Սպեկալի» («Թանկարժեք քար»), որը հրատարակվել է 1755 թվականին, և «Կատեգորիա-Սիմետնե» («Կատեգորիաներ և այլ հարցեր»), որը լույս է տեսել 1764 թվականին: Երկու աշխատություններն էլ ամփոփում են Արիստոտելի առանցքային գաղափարները տրամաբանության բնագավառում՝ մասնավորապես անդրադառնալով «Մեկնության մասին» («Peri Hermeneias»), «Կատեգորիաներ» և «Վերլուծություններ» երկերին, ինչպես նաև «Հոգու մասին» («De anima») աշխատության մեջ ներկայացված՝ հոգու վերաբերյալ նրա հայացքներին:

XVII–XVIII դարերում արիստոտելականությունը նշանակալի տարա-

ծում է ստացել ուղղափառ աշխարհում, այդ թվում՝ Բուլղարիայում, Ռումինիայում և Բալկանյան երկրներում, ինչպես նաև Հայաստանում: Նման միտում է նկատվում նաև XVIII դարի Վրաստանում:

Արիստոտելի աշխատությունները և ուղղափառ ավանդույթի հեղինակների երկերը քննարկելիս Անտոնը հղում է կատարել նաև կաթոլիկ աստվածաբանների՝ Ալբերտ Մեծի, Թովմա Աքվինացու և վերջինիս ուսմունքը համակարգող Անտուան Գուդենի մեկնություններին: Գուդենի աշխատությունները վրացերեն են թարգմանվել հայերենից:

Ձեկուցման մեջ կքննարկվեն այդ թարգմանությունների պատմությունը և դրանց ազդեցությունը վրացական փիլիսոփայական մտքի վրա: Անտոնի աշխատությունները կդիտարկվեն պատմական և փիլիսոփայական համատեքստում՝ ցույց տալու համար, թե ինչպես են կաթոլիկ հեղինակների որոշակի փիլիսոփայական-աստվածաբանական գաղափարներ ներթափանցել վրացական մտավոր միջավայր, և ինչ դեր են ունեցել այդ գործընթացում հայերենից կատարված թարգմանությունները:

Tamar TSOPURASHVILI, PhD, professor (Georgia)
Ilia State University

GEORGIAN-ARMENIAN PHILOSOPHICAL EXCHANGE IN 18TH-CENTURY GEORGIA: THE CASE OF ANTON BAGRATIONI'S SCHOOL

In my paper I will discuss the Georgian-Armenian exchange in the field of philosophy in the 18th century that has been stimulated by Anton Bagrationi, Patriarch of All Georgia in 1720-1788.

Anton has established two theological seminaries and stimulated the translation of Aristotelian works and their commentaries, even from Armenian, which in turn promoted intellectual exchange between the two nations. He aimed to provide schools with translated teaching materials.

Beside of translations Anton wrote two independent philosophical works: Spekali (Gemstone), published in 1755 and Categoria-Simetne (Categories and More) published in 1764. Both philosophical pieces serve as a summary of Aristotle's key ideas in logic, focusing on Peri Hermeneias, Categories, and the Analytics, as well as his views on the soul presented in De anima.

In the 17th-18th centuries, Aristotelianism became prominent in the Orthodox world, including Bulgaria, Romania, and Balkan nations, also in Armenia. Georgia shows a similar inclination in the 18th century.

By discussing Aristotle's works alongside traditional Orthodox authors, Anton refers the interpretations of Catholic theologians such as Albertus Magnus, Thomas Aquinas, and Aquinas' systematizer Antoine Goudin. Goudin's works have been translated into Georgian from Armenian.

In my paper I will explore the history of this translation and its impact on Georgian philosophical milieu.

My paper will contextualize Anton's work historically and philosophically, demonstrating how he brought specific philosophical-theological ideas from Catholic authors into the Georgian intellectual milieu and what role played in this process the translations made from Armenian language.

Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ, ճ.թ. (Հայաստան)
Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Լուսինե ՆԱՀԱՏԱԿՅԱՆ (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՇԻՐԱԿԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Շիրակի ավանդական բնակելի տների աստիճանական քայքայումը և դրանց ճարտարապետական առանձնահատկությունների կորստի վտանգը հրատապ են դարձնում այդ կառույցների ուսումնասիրությունը, չափագրումն ու փաստագրումը: Այս խնդրին էր ուղղված 2026 թ. օգոստոսի 24–30-ը Գյումրիում և հարակից բնակավայրերում իրականացված «Տունը որպես տեքստ» միջազգային ամառային դպրոցը, որին մասնակցել են նաև բանագետներ Հասմիկ Մատիկյանն ու Հասմիկ Գալստյանը:

Ամառային դպրոցի ընթացքում Լեռնուտում, Սառնաղբյուրում և այլ բնակավայրերում չափագրվել ու փաստագրվել է 13 ավանդական բնակելի տուն և համալիր: Ուսումնասիրվել են շինությունների հատակագծային և

ծավալատարածական առանձնահատկությունները, կառուցվածքային լուծումներն ու շինարարական տարրերը: Արձանագրվել են նաև մասնակի պահպանված կառույցների բուխարիների մնացորդները, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում բնակելի տների ներքին կազմակերպման և գործառնական առանձնահատկությունների մասին:

Ուսումնասիրության ընթացքում իրականացվել են կառույցների չափագրում, լուսանկարահանում և ճարտարապետական տվյալների նախնական համակարգում: Հավաքագրված նյութերը հնարավորություն են տալիս համեմատելու տարբեր բնակավայրերի ավանդական բնակելի տների հատակագծային լուծումները, բացահայտելու դրանց ընդհանրություններն ու տարբերությունները և գնահատելու պահպանված ճարտարապետական տարրերի պատմամշակութային նշանակությունը:

Աշխատանքների արդյունքներով ձևավորվել են փաստագրական փաթեթներ, որոնք ներառում են չափագրական գծագրեր, լուսանկարներ և ուսումնասիրված կառույցների վերաբերյալ տեղեկություններ: Չափագրությունների գրաֆիկական մշակումն ավարտական փուլում է, իսկ նյութերի համադրումն ու համալրումը շարունակվում են Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում:

Իրականացված աշխատանքները կարևոր հիմք են Շիրակի ավանդական բնակելի տների ճարտարապետական առանձնահատկությունների հետագա ուսումնասիրության, գիտական հրապարակումների պատրաստման և տարածաշրջանի բնակելի ճարտարապետական ժառանգության պահպանությանն ուղղված նախաձեռնությունների համար:

Davit NAHATAKYAN, PhD in Architecture (Armenia)
National University of Architecture and Construction of Armenia
Shirak Center for Armenological Studies
Lusine NAHATAKYAN (Armenia)
Shirak Center for Armenological Studies

ARCHITECTURAL STUDY OF TRADITIONAL RESIDENTIAL HOUSES IN SHIRAK

The gradual deterioration of traditional residential houses in Shirak and the risk of losing their distinctive architectural features highlight the urgent need to study, measure, and document these structures. This objective was

addressed by the international summer school *"The House as Text,"* held in Gyumri and neighboring settlements from August 24 to 30, 2026. Folklorists Hasmik Matikyan and Hasmik Galstyan also participated in the summer school.

During the summer school, 13 traditional residential houses and complexes were measured and documented in Lernut, Sarnaghbyur, and other settlements. The study examined the buildings' floor plans, spatial and volumetric characteristics, structural solutions, and construction elements. The remains of fireplaces in partially preserved structures were also recorded, providing valuable information about the interior organization and functional characteristics of traditional residential houses.

The research involved architectural measurements, photographic documentation, and the preliminary systematization of architectural data. The collected materials enable comparisons of the floor-plan solutions of traditional residential houses across different settlements, the identification of their common features and differences, and an assessment of the historical and cultural significance of their surviving architectural elements.

As a result of the fieldwork, documentation packages were compiled, including measured drawings, photographs, and descriptive information about the studied structures. The graphic processing of the measured drawings is nearing completion, while the collected materials continue to be reviewed, supplemented, and systematized at the Shirak Center for Armenological Studies.

The work provides an important foundation for further research into the architectural characteristics of traditional residential houses in Shirak, the preparation of scholarly publications, and the development of initiatives aimed at preserving the region's traditional residential architectural heritage.

Վարդուհի ԲԱԼՈՅԱՆ, բ.գ.թ. (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՇԻՐԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթը հայ բանահյուսության այն ժանրերից է, որն իր բանավոր բնույթին զուգահեռ վաղուց ներգրավվել է նաև մանկական ընթերցանության և դաստիարակության ոլորտում: Շիրակի բանահյուսական հարուստ ժառանգությունը, մասնավորապես՝ ժողովրդական հեքիաթները, այս տեսանկյունից կարևոր նյութ են ոչ միայն տարածաշրջանի բանահյուսական առանձնահատկությունները բացահայտելու, այլև ժողովրդական պատումի՝ մանկական լսարանի համար վերաիմաստավորման և փոխանցման գործընթացը դիտարկելու համար:

Ուսումնասիրության հիմնական նյութը «Հայ ժողովրդական հեքիաթների» 4-րդ հատորում ընդգրկված հեքիաթներն են: Դրանց քննությամբ փորձ է արվում պարզելու, թե ինչպիսի թեմատիկ, կառուցվածքային, բարոյախրատական և կերպարային առանձնահատկություններ են բնորոշ Շիրակի ժողովրդական հեքիաթներին, և որքանով են այդ առանձնահատկությունները համադրելի մանկական ընթերցանության պահանջների հետ: Առանձին ուշադրություն է դարձվելու հեքիաթի՝ որպես երեխային ոչ միայն զվարճացնող, այլև աշխարհընկալում, բարոյական պատկերացումներ և արժեքային կողմնորոշումներ ձևավորող պատումի գործառույթին:

Ուսումնասիրության լրացուցիչ աղբյուր է Չիլինկարյանի «Ինչպէս պէտք է հէքիաթ պատմել» ձեռնարկը, որը հնարավորություն է տալիս դիտարկելու հեքիաթի ներկայացման և մանկական լսարանին մատուցելու ժամանակակից մոտեցումները: Ձեռնարկի մանկավարժական դիտարկումները կօգտագործվեն որպես համատեքստ՝ հասկանալու համար, թե ինչպես էր ընկալվում հեքիաթի դերը երեխայի կրթության, լեզվական զարգացման և բարոյական դաստիարակության գործընթացում:

Այսպիսով, ուսումնասիրությունը նպատակ ունի ներկայացնելու Շի-

րակի ժողովրդական հեքիաթը ինչպես որպես բանահյուսական ժառանգության բաղադրիչ, այնպես էլ որպես մանկական ընթերցանության համար վերաիմաստավորվող նյութ՝ բացահայտելով բանահյուսության և մանկական գրականության փոխառնչության որոշ դրսևորումներ:

Varduhi BALOYAN, PhD in Philology (Armenia)
Shirak Center for Armenological Studies

SHIRAK FOLK TALES AND CHILDREN'S READING: FROM FOLKLORE TO CHILDREN'S LITERATURE

The fairy tale is one of the genres of Armenian folklore that, alongside its oral tradition, has long been associated with children's reading, education, and moral instruction. The rich folkloric heritage of Shirak, particularly its corpus of folk tales, provides valuable material for examining not only the distinctive features of regional folklore but also the ways in which traditional narratives could be transmitted, interpreted, and adapted for younger audiences.

The primary corpus of this study consists of the tales included in the collection Armenian Folk Tales (v. IV). Through an examination of these narratives, the paper explores their thematic, structural, characterological, and moral-educational features and considers the extent to which these characteristics correspond to the expectations and functions of children's reading. Particular attention is given to the fairy tale as a form of narrative that does more than entertain: it introduces children to particular concepts of good and evil, social behavior, justice, human relationships, and the wider world, while simultaneously contributing to the development of imagination and language.

A complementary source for the study is Chilingkaryan's How a Fairy Tale Should Be Told: A Practical Manual for Primary-School, Religious and Armenian-Language Teachers and Parents. This pedagogical manual provides an additional perspective for considering the role attributed to fairy tales in children's education and the ways in which oral storytelling and reading could be mediated by teachers and parents. Its recommendations will be used primarily as a contextual framework rather than as the principal object of analysis, allowing the study to connect the folkloric corpus with historical approaches to children's education, language development, and moral

formation.

The paper therefore approaches the Shirak folk tale not solely as a component of regional folkloric heritage, but also as a potential source for children's reading and literary formation. By bringing together folklore, children's literature, and pedagogical discourse, the study seeks to illuminate some of the processes through which orally transmitted narratives entered, or could enter, the sphere of children's literary culture.

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ (Հայաստան)
Շիրակի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն,
Շիրակի պետական համալսարան
Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Հայաստան)
Շիրակի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն,

ՇԻՐԱԿԻ ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ԽՈՍՔԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ՓՈՐՁ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՈՒՄ

Ձեկուցման մեջ ուսումնասիրվում են Շիրակի բանաձևային խոսքի էթնոմշակութային դրսևորումները՝ «փորձ, հիշողություն և գոյատևում» փոխկապակցված եռամիասնության համատեքստում: Բանաձևային խոսքը դիտարկվում է ոչ միայն որպես լեզվական և բանագիտական կայուն միավորների ամբողջություն, այլև ժողովրդական կենսափորձի խտացման, պահպանման, փոխանցման և նոր իրավիճակներում վերաիմաստավորման մշակութային համակարգ:

Փորձը բանաձևային խոսքի ձևավորման հիմքն է. բնության, կյանքի, կորստի, վտանգի և սոցիալական հարաբերությունների վերաբերյալ բազմասերունդ դիտարկումները խտանում են առածներում, ասույթներում և այլ բանաձևային նմուշներում՝ դառնալով հետագա սերունդների համար ճանաչելի և կիրառելի գիտելիք:

Հիշողությունը ապահովում է այդ փորձի պահպանումն ու փոխանցումը: Առածները, ասույթները, անեծքները, օրհնանքները, երդումներն ու մաղթանքները հանդես են գալիս որպես մշակութային հիշողության ձևեր՝ պահպանելով արժեքային պատկերացումները, սոցիալական հարաբերությունների և վարքագծային կողմնորոշման ավանդական եղանակները:

Գոյատևումը մեկնաբանվում է ոչ միայն որպես ֆիզիկական պահպանություն, այլև մշակութային հիշողությամբ ճգնաժամին դիմակայելու և սահմանային իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն: Շիրակում գրառված նյութում վտանգը, վախը, կորուստը, փոխօգնությունն ու վերականգնումը ձևավորում են փոխկապակցված ճգնաժամային կոդ, որի շրջանակում բանաձևային խոսքը դառնում է վարքագծային և հոգեբանական կողմնորոշման միջոց:

Առանձին դիտարկվում են անեծք–օրհնանք–երդում–մաղթանք բանաձևային համակարգերը՝ որպես խոսքի մոգածիսական, սոցիալական և հոգեբանական ներգործության ձևեր, որոնք արտահայտում են մշակութային արժեքներ, կարգավորում հարաբերությունները և ամրապնդում համերաշխությունը:

Այսպիսով, Շիրակի բանաձևային խոսքը փորձի, հիշողության և գոյատևման փոխկապակցված մշակութային համակարգ է՝ նպաստելով ներկայի դժվարությունների հաղթահարմանն ու կուտակված փորձի փոխանցմանը:

Karine SAHAKYAN (Armenia)
PhD in Psychology, Associate Professor
Shirak Center for Armenological Studies
Shirak State University
Roza HOVHANNISYAN (Armenia)
Shirak Center for Armenological Studies

ETHNOCULTURAL MANIFESTATIONS OF FORMULAIC SPEECH IN SHIRAK: EXPERIENCE, MEMORY, AND SURVIVAL

The paper examines the ethnocultural manifestations of formulaic speech in Shirak within the interconnected triad of experience, memory, and survival. Formulaic speech is viewed not merely as a collection of stable linguistic and folkloric units, but also as a cultural system through which popular life experience is condensed, preserved, transmitted, and reinterpreted in new situations.

Experience forms the basis of formulaic speech. Multigenerational observations concerning nature, life, loss, danger, and social relations are condensed into proverbs, sayings, and other formulaic expressions, becoming

recognizable and applicable knowledge for subsequent generations.

Memory ensures the preservation and transmission of this experience. Proverbs, sayings, curses, blessings, oaths, and well-wishes serve as forms of cultural memory, preserving value systems, social relations, and traditional patterns of behavioral orientation.

Survival is understood not only as physical preservation but also as the capacity to withstand crises and navigate critical situations through cultural memory. In the materials recorded in Shirak, danger, fear, loss, mutual assistance, and recovery form an interconnected crisis code, within which formulaic speech serves as a means of psychological and behavioral orientation.

Particular attention is given to the formulaic systems of curses, blessings, oaths, and well-wishes as forms of the ritual-magical, social, and psychological impact of speech. These expressions convey cultural values, regulate relationships, and strengthen solidarity.

Thus, formulaic speech in Shirak constitutes an interconnected cultural system of experience, memory, and survival, contributing to overcoming present-day challenges and transmitting accumulated experience.

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ, պատմ. գիտ. դոկտոր (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ, պ.գ.թ. (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի պետական համալսարան

ԵՐՎԱՆԴՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ.Թ.Ա. III Դ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ԱՆՏԵՍՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ

Հայկական վաղհելլենիստական արվեստի ուշագրավ մի նմուշ է եղել մարմարե քանդակազարդ այն սալը, որը մեզ չի հասել, բայց բարեբախտաբար նրա լուսանկարն ունենք: Լուսանկարը գիտական շրջանառության մեջ դրած Գարեգին Լևոնյանը կասկածի տակ էր առնում պատկերաքանդակի իսկությունը: Գր. Ղափանցյանը բերում էր մարմարե սալի լուսանկարը, բայց չէր հստակեցնում իր մոտեցումը նրա իսկական կամ կեղծիք լինելու վերաբերյալ, սակայն Արա Գեղեցիկի պաշտամունքում եզան բաղադրիչ պաշտամունքի առնչությամբ նա անդրադառնում է

դրան, գրելով, որ մարմարե պատկերաքանդակին «նույնպես տեսնում ենք եզի պաշտամունք: Սա համարվում է ոմանց կողմից կեղծիք, բայց մեզ համար կարևոր են քանդակի նախատիպը, պատկերացումը, որը զուտ ֆանտազիա չէր կարող լինել»:

Սալիկի պատկերների պաշտամունքային և գաղափարախոսական հենքը ներկայացնում է միաձույլ մի համակարգ և ժխտում է պատկերաքանդակը կեղծիք համարող տեսակետը. նրա բոլոր պատկերները իմաստային փոխկապակցության մեջ են: Դրանք բոլորը համախմբված են Զևս-Արամազդ գերագույն աստծու կերպարի մեջ միավորված Ամպրոպի և Արևի աստվածների պաշտամունքների շուրջ: Զևս-Արամազդի խորհրդանիշը ցլագլուխն է:

Պատկերաքանդակն ունի իր սիմետրիայի առանցքը, որով բաժանվում է ձախ/իգական և աջ/արական մասերի: Ձախում արքայական թագով մայրն է երեք մանուկ դուստրերի, իսկ աջում փարթամ մորուքով հայրն է երեք մանուկ որդիների հետ միասին: Մոր և հոր կողմից ցլագլխին կատարված նվիրաբերումները ևս ձախ/աջ հակադրամիասնության մեջ են:

Մարմարե պատկերաքանդակն արտացոլում է մ.թ.ա. III դ. կեսերի պատմական դեպքերը, երբ Մեծ Հայքի Արշամ/Արշակ թագավորի (մ.թ.ա. 259-222 թթ.) դուստրը ամուսնանալով երկրի քրմապետի հետ, լույս աշխարհ էր բերել ապագա թագավոր Երվանդ Վերջինին (մ.թ.ա.222-201 թթ.) և Երվազ քրմապետին: Երեք տղաներից ավագը լինելու է ինքը՝ մարմարե պատկերաքանդակը պատրաստել տված ապագա թագավորը՝ Երվանդը, իսկ կրտսերը՝ երկար վարսերովը, լինելու է ապագա քրմապետ Երվազը:

Մարմարե պատկերաքանդակը նաև պատմական վավերագիր է: Նրա միջոցով հաստատվում է Մովսես Խորենացու հաղորդումները Երվանդ Վերջինի մայրական գծով Երվանդունի (ըստ նրա՝ Արշակունի) լինելու մասին, իսկ հոր գծով նա քրմապետների տոհմից էր:

Sargis PETROSYAN, Doctor of History (Armenia)
Shirak Center for Armenological Studies
Lusine PETROSYAN, PhD in History (Armenia)
Shirak Center for Armenological Studies
Shirak State University

IGNORED SOURCE OF THE HISTORY OF ERVANDID ARMENIA IN THE 3RD CENTURY B. C.

A remarkable example of Early Hellenistic Armenian art was a marble relief slab that has not survived, although, fortunately, a photograph of it has been preserved. Garegin Levonyan, who first introduced the photograph into scholarly circulation, questioned the authenticity of the relief. Gr. Ghapantsyan reproduced a photograph of the marble slab but did not explicitly state his position as to its authenticity or alleged forgery. Nevertheless, in discussing the bull-related component of the cult of Ara Geghetsik (Ara the Beautiful), he referred to the relief, observing that "the cult of the bull can likewise be seen in the marble relief. Some regard it as a forgery, but for us what is important is the prototype of the sculpture, the conception embodied in it, which could not have been merely a product of fantasy."

The cultic and ideological framework underlying the imagery of the slab constitutes an integrated system and argues against the interpretation of the relief as a forgery. All of its figures and motifs are interconnected at the semantic level. They are unified around the cults of the Thunder and Sun Gods, which are brought together in the figure of the supreme deity Zeus-Aramazd. The bull's head serves as the principal symbol of Zeus-Aramazd.

The composition is organized along an axis of symmetry, dividing it into a left, feminine, and a right, masculine, half. On the left is a mother wearing a royal crown, accompanied by three young daughters; on the right is a father with a luxuriant beard, accompanied by three young sons. The offerings made by the mother and father to the bull's head likewise constitute a left–right antithetical unity.

The marble relief appears to reflect historical events of the mid-third century BCE, when the daughter of King Arsham/Arshak of Greater Armenia (259–222 BC), having married the kingdom's high priest, gave birth to the future King Yervand the Last (222–201 BC) and to the high priest Yervaz. Of the three male children represented on the relief, the eldest would have been Yervand himself, the future king who commissioned the marble relief, while the youngest, depicted with long hair, would have been the future high priest Yervaz.

The marble relief may also be regarded as a historical document. Its imagery provides support for Moses of Chorene's account concerning the maternal Yervanduni lineage of Yervand the Last—identified by Movses Khorenatsi as Arsacid—while simultaneously indicating that, through his paternal line, he belonged to the lineage of the high priests.

Հնգա Ավագյան, պ.գ.թ., դոցենտ (Հայաստան)
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԲԱՆՏԱՐԿՅԱԼԸ ԲԱՆՏԱԽՑԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԻՋԵՎ՝ ԸՍՏ ԿԱՐԱՊԵՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կարապետ Դուրգարյանը բանասեր է, ով իր կյանքի լավագույն տարիները անց է կացրել Խորհրդային Հայաստանի և ԽՍՀՄ մյուս հանրապետությունների բանտերում և գուլագում՝ ենթարկվելով Ստալինյան բռնաճնշումներին զուտ այն բանի համար, որ ՀՅԴ անդամ Պատվալի Վաղո հայտնի ֆիդայինի գործընկեր Ուսուլ Գրիգորի որդին էր: 1967 թ. Կարապետ Դուրգարյանը, լսելով Ավետիք Իսահակյանի խորհուրդը, գրել է իր տասնհինգամյա տաժանակիր բանտարկության վերաբերյալ հուշապատումը: Հիշողություններում առանձին շերտ է ներկայացնում հասարակ բանտարկյալի, գողերի լեզվով՝ մուժիկի կյանքը, աշխատանքը և հարաբերությունները բանտի վարչական ղեկավարության հետ: Բանտի բազմատարր բանտարկյալների հարաբերություններում խիստ ուշագրավ են «մեծ և փոքր գողերի» հարաբերությունները բանտի մյուս

բնակիչների և աքսորյալների հետ: Դեռևս այս հարցի շուրջ իր դիտարկումներն է արել Սոլժենիցինը իր աշխատության մեջ Հենց այստեղ է, որ Կարապետ Դուրգարյանը մի տեսակ առասպելական և բանահյուսական մոտեցում է ցուցաբերում և իր հուշերում երբեմն կատակով, երբեմն լուրջ փորձում է ներկայացնել գողական աշխարհը, բարքերը, կարգերը, հարաբերությունները բանտարկյալների այլ շերտերի և տարրերի, բանտապետերի և պահակների հետ: Հուշերի երկրորդ գլխի վերջում Կարապետը ներկայացնում է գողական օրենքին դասալքած գողականներին, դրանց անվանելով «суки»: Այս դասալիք գողերը աներևույթ չարիք էին, նրանք համագործակցում էին չեկիստների՝ քավոր, ոստիկանների և պահակների՝ բանտերի և գուլագների ղեկավարության հետ, սանձազերծում բախումներ և սպանում հեղինակություն համարվող գողերին: Բնականաբար «փոքր և մեծ» գողերի և սուկաների ընդհարումների զոհեր էին դառնում բանտերի և գուլագների պահակները, հասարակ մուժիկները, կոչում ունեցող զինվորականները: Սակայն երբեմն գողերը թողնում էին իրենց կոչումը և արհեստը, բանտերում և գուլագներում սովորում մասնագիտություն և աշխատում բանտի որևէ արհեստանոցում: «Փոքր և մեծ» գողերի անձնական հարաբերությունները Կ. Դուրգարյանի հետ բավական ուշագրավ էին: Հայաստանի բանտերում՝ սկսած Լենինականի ԿԳԲ-ի՝ ՊԱԿ-ի բանտախցերից վերջացրած ԽՍՀՄ-ի բանտերով և Վյատլագով, Կ.Դուգարյանը ի պաշտոնե ստիպված էր շփվել քրեական տարրերի և գողերի հետ: Պետրոզավոդսկի բանտում, որտեղ բանտարկյալներին օրվա ընթացքում ընդամենը կես լիտր եռացրած ջուր էին տալիս, այն էլ այդ ջուրը խլում էին գողերը, սանձազերծելով աքսորականների՝ ծերերի և կանանց ջրազրկում և մահը, Դուրգարյանը կարողանում է փրկել թե՛ իր, թե՛ իր ընկերների կյանքը, ավել քանակով ջուր ստանալով հեղինակավոր գողերից: Պատճառը այն էր, որ նա զվարճալի էր դարձնում «փոքր և մեծ» գողերի երեկոները, նրանց «ռոմաններ» պատմելով: Իսկ «ռոմանների» մեջ «փոքր և մեծ» գողերին առավել ոգևորում էր Շերլոկ Հոլմսի կերպարը: Բայց գողերը գիտեին հարգել լավ մուժիկին, իրենց գուլագներում ու բանտերում ցիրուցան եղած հանրույթի անդամներին կարողանում էին կարևոր տեղեկություններ փոխանցել այն մուժիկների մասին, ովքեր ճարահատ օգնում էին գողերին՝ ամենազանազան միջոցներով: Այստեղ տեղին է հիշել Վյատլագի տուգանային գուլագը, որի անմարդկային պայմաններում հեղինակավոր գողը, որը հրաժարվում էր աշխատելուց, ենթարկվում էր ծեծի,

կամ նետվում պատժախուց սառնամանիքի մեջ: Ահա այս պայմաններից Կ. Դուրգարյանը որոշ ժամանակով փրկել էր մի հայ գողի՝ Վոլոդյային, ով էլ պատեհ առիթով վարձահատույց եղավ նրան՝ փրկելով Կարապետի կյանքը մեկ այլ հեղինակավոր գողի վրեժխնդրությունից:

Զեկուցման շրջանակում հուշապատման տեղեկույտը համեմատվելու է այլ բանտարկյալների վկայությունների հետ, արվելու են ընթանրացումներ գիտական գրականությունից, «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի այն վերապրածների պատմածների հետ, որոնք ենթարկվել են բռնաճնշումներին, արժևորվելու և գիտական շրջանառության մեջ է դրվելու Ստալինյան բնաճնշումների մասին վկայող եզակի համարվող այս վկայությունը:

Inga AVAGYAN, PhD in History, Associate Professor (Armenia)
"Kumayri Historical and Cultural Museum-Reserve"
Shirak Center for Armenological Studies

THE PRISONER BETWEEN PRISON CELL LIFE AND THE CRIMINAL UNDERWORLD: BASED ON THE MEMOIRS OF KARAPET DURGARYAN

Karapet Durgaryan is a philologist who spent the best years of his life in the prisons and gulags of Soviet Armenia and other republics of the USSR, subjected to Stalinist repressions simply because he was the son of Usul Grigor, a famous fedayeen associate of ARF member Patvali Vagho. In 1967, Karapet Durgaryan, listening to Avetik Isahayan's advice, wrote a memoir about his fifteen-year ordeal in prison. In his memoirs, he presents a separate layer of the life of an ordinary prisoner - a peasant, in the language of criminals, his work and relations with the prison administration. Among the relations of the diverse prisoners of the prison, the relations of "big and small criminals" with other prison residents and exiles are very remarkable. Solzhenitsyn already made his observations on this issue in his work. It is here that Karapet Durgaryan demonstrates a kind of mythical and folkloric approach and in his memoirs, sometimes jokingly, sometimes seriously tries to present the criminals' world, morals, orders, relations with other layers and elements of prisoners, prison governors and guards. At the end of the second chapter of the memoirs, Karapet presents the thieves who had

abandoned the criminals' law, calling them "suki". These deserted criminals were an invisible evil, they collaborated with the Chekists - godfathers, policemen and guards, the leadership of prisons and gulags, unleashed clashes and killed thieves who were considered authoritative. Naturally, the victims of the clashes between "small and big" criminals and "sukis", became ordinary peasants, military personnel with ranks, prison and gulag guards. However, sometimes criminals abandoned their "profession", learning a profession in prisons and gulags and working in prison workshop. The personal relations of “small and big” criminals with K. Durgaryan were quite remarkable. In Armenian prisons, starting from the KGB cells of Leninakan, ending with the prisons of the USSR and Vyatlag, K. Durgaryan had to communicate with criminal elements and criminals by virtue of his position. In the Petrozavodsk prison, where prisoners were given only half a liter of boiled water a day, and even that water was taken away by criminals, unleashing dehydration and death of the exiles, the elderly and women, Durgaryan managed to save both his own life and the lives of his friends by receiving an additional amount of water from reputable criminals. The reason was that he made the evenings of “small and big” thieves fun by telling them “novels”. And among the “novels” the “small and big” criminals were most inspired by the character of Sherlock Holmes. But the thieves knew how to respect a good peasant, and they were able to convey important information to the members of the public scattered in their gulags and prisons about the peasants who desperately helped the criminals in a variety of ways. Here it is appropriate to recall the Vyatlag penal gulag, in whose inhuman conditions a reputable criminal who refused to work was beaten or thrown into a punishment cell in the cold. It was from these conditions that K. Durgaryan had saved an Armenian criminal, Volodya, for some time, who, on an opportune occasion, rewarded him by saving the life of Karapet from the revenge of another reputable criminal.
Within the framework of the report, the memoir will be compared with the testimonies of other prisoners, excerpts will be made from scientific literature, and with the stories of survivors from the "Survivors of the Great Genocide" series who were subjected to repressions. This unique testimony about Stalin's repressions will be evaluated and put into scientific circulation.

Համլիկ ՄԱՏԻԿՅԱՆ, բ.գ.թ., դոցենտ (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Փոլ ՔԱՈՒԴԵԼ, բ.գ.դ. (Միացյալ Թագավորություն)
Բրիստոլի համալսարան
Արմանուշ ՎԱՐԴԱՆՅԱՆ (Հայաստան)
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԿԵՐԱԿՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ (ԿԱՐՍԻ և ՇԻՐԱԿԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)[9]

Կերակուրը՝ որպես մարդու կյանքի գոյապայման, կարևոր տեղ է զբաղեցնում մանկական բանահյուսության մեջ՝ ձեռք բերելով ոչ միայն կենսական, այլև խորհրդանշական նշանակություն: Սույն հետազոտության նպատակն է բացահայտել կերակրի խորհրդաբանական գործառույթները հայ և անգլալեզու մանկական բանահյուսական տեքստերում՝ մասնավորապես օրորոցային երգերում, հաշվերգերում, խաղերգերում և բանավոր ավանդույթի այլ դրսևորումներում: Ուսումնասիրության հիմքում հայ բանահյուսական նյութերն են, այդ թվում՝ Կարսի և Շիրակի նմուշները, ինչպես նաև անգլալեզու մանկական հանգավոր տեքստերն ու երգերը:

Հետազոտության շրջանակում քննվում են կերակրի տարբեր տեսակների՝ հացի, ցորենի, կաթի, յուղի, մեղրի, նուշի, խնձորի և քաղցրավենիքի պատկերային ու իմաստային դրսևորումները: Դրանք դիտարկվում են սնուցման, մայրական հոգատարության, երեխայի դաստիարակության, բարեկեցության, գեղեցկության և ապագայի վերաբերյալ պատկերացումների համատեքստում:

Հայկական օրորոցային երգերում կաթի, յուղի և մեղրի հիշատակությունները հաճախ արտահայտում են երեխայի նկատմամբ սեր, խնամք ու բարեմաղթանքներ, իսկ ցորենն ու հացը խորհրդանշում են առատությունն ու կենսական շարունակականությունը: Խնձորի պատկե-

[9] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 25RG-6B114 ծածկագրով նախագծի շրջանակում:

րը որոշ տեքստերում կապվում է գեղեցկության և խոստման գաղափարների հետ: Անգլալեզու մանկական տեքստերում կերակրի անվանումները հաճախ ներառվում են հանգավոր բանաձևերում, հաշվերգերում և բառախաղերում՝ արտացոլելով առօրյա կյանքի ու մշակութային ավանդույթի տարբեր կողմեր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կերակրի պատկերները մանկական բանահյուսության մեջ չեն սահմանափակվում սննդի և սնուցման մասին տեղեկություններով: Դրանք նաև մշակութային հիշողության, հասարակական արժեքների և մանկության վերաբերյալ ավանդական պատկերացումների արտահայտման միջոցներ են: Կերակրի խորհրդանշական դրսևորումների համեմատական քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես են մանկական բանահյուսական տեքստերը պահպանվում և փոխանցում մշակութային առանձնահատկություններ՝ միաժամանակ արտացոլելով երեխային կերակրելու, խնամելու և դաստիարակելու համամարդկային փորձը:

Hasmik MATIKYAN, PhD in Philology, Associate Professor (Armenia)
Shirak Center for Armenological Studies
Paul COWDELL, Doctor of Philology (United Kingdom)
University of Bristol
Armanush VARDANYAN (Armenia)
Shirak Center for Armenological Studies

THE SYMBOLISM OF FOOD IN CHILDREN'S FOLKLORE TEXTS (BASED ON COMPARATIVE MATERIALS FROM KARS AND SHIRAK)[10]

Food, as a fundamental condition of human existence, occupies a significant place in children's folklore, acquiring not only nutritional but also symbolic meanings. This study aims to explore the symbolic functions of food in children's folklore, with particular emphasis on lullabies, counting-out

[10] The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25RG-6B114)

rhymes, play songs, and other forms of oral tradition. The research draws on Armenian folkloric materials, including examples recorded in the Shirak region, as well as English-language nursery rhymes and songs.

The study examines the imagery and semantic representations of various food items, including bread, wheat, milk, butter, honey, nuts, apples, and sweets. These are analyzed in relation to nourishment, maternal care, child-rearing, prosperity, beauty, and expectations for the future. In Armenian lullabies, references to milk, butter, and honey often express affection, care, and benevolent wishes for the child, while wheat and bread symbolize abundance and the continuity of life. The image of the apple is associated in certain texts with beauty and the notion of a promise. In English-language children's texts, food-related words frequently appear in rhyming formulas, counting-out rhymes, and wordplay, reflecting various aspects of everyday life and cultural tradition.

The study demonstrates that food imagery in children's folklore extends beyond references to food and nourishment. It also serves as a means of expressing cultural memory, social values, and traditional perceptions of childhood. A comparative examination of the symbolic representations of food makes it possible to explore how children's folklore preserves and transmits culturally specific meanings while also reflecting the shared human experience of feeding, caring for, and raising children.